Ռուսաստանը խնդրում է Հայաստանին՝ հնարավորինս շուտ հանրաքվե անցկացնել ԵՄ-ում կամ ԵԱՏՄ-ում իր ապագայի վերաբերյալ, ասել է Ռուսաստանի նախագահը Սանկտ Պետերբուրգի միջազգային տնտեսական ֆորումի շրջանակներում միջազգային լրատվական գործակալությունների ղեկավարների հետ հանդիպման ժամանակ: «Անկախ նրանից, թե Հայաստանը որ ուղին կընտրի, Ռուսաստանը կպահպանի այդ երկրի հետ հարաբերությունները: ԵՄ-ին անդամակցության մասին Հայաստանում օրենքի ընդունումը մտահոգություններ է առաջացրել Ռուսաստանում»,-նշել է նա (5.06.2026 թ.):

Հինգշաբթի
18 հունիսի 2026թ.
№ 8 (658)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ: ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

ՔՊ-ն այլեւս խորհրդարանում չունի սահմանադրական մեծամասնություն

«Քաղաքացիական պայմանագիրը» կունենա 64 մանդատ (3 մանդատը կտրվի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին, մասնավորապես եզդի, ռուս, քուրդ ազգերի ներկայացուցիչներին), «Ուժեղ Հայաստան» կուսակցությունը՝ 29 մանդատ (1 մանդատ կունենա ասորի ներկայացուցիչը), իսկ «Հայաստան» դաշինքը՝ 12 մանդատ»:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը, ըստ ԿԸՀ-ի, չի հաղթահարել 4% անցողիկ շեմը՝ հավաքելով 58287 քվե կամ 3.9893%:

ԿԸՀ-ն հրապարակել է 2026 թ. հունիսի 7-ի ընտրությունների արդյունքները

- Ընտրողների ցուցակներում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը՝ 2503990
- Քվեարկության օրն ընտրական տեղամասում կազմված ընտրողների լրացուցիչ ցուցակում ընտրողների ընդհանուր թիվը՝ 1237
- Շրջիկ արկղով քվեարկող ընտրողների լրացուցիչ ցուցակում ընտրողների ընդհանուր թիվը՝ 1300
- Էլեկտրոնային եղանակով քվեարկության մասնակցած ընտրողների թիվը՝ 410
- Ընտրողների ընդհանուր թիվը՝ 2506826
- Քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը՝ 1476769
- Տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացված ինքնասոսնձվող դրոշմանիշների ընդհանուր թիվը՝ 260510
- Տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացված համարակալված կտրոնների ընդհանուր թիվը՝ 204000
- Ընտրողներից ստացված տեխնիկական սարքավորմամբ տպված կտրոնների ընդհանուր թիվը՝ 1470790
- Ընտրողներից ստացված համարակալված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը՝ 2298
- Ընտրողներից ստացված կտրոնների ընդհանուր թիվը՝ 1473088
- Չօգտագործված համարակալված կտրոնների ընդհանուր թիվը՝ 202121
- Չօգտագործված ինքնասոսնձվող դրոշմանիշերի ընդհանուր թիվը՝ 1127734

Անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 16210

Ներկայացվել է նաև կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ստացած քվեները.

1. Ռեֆորմիստների կուսակցություն
   ≡ 0.0975 տոկոս 1425 ձայն
2. «Բոլորին դեմ եմ» ժողովրդավարական կուսակցություն
   ≡ 1.4497 տոկոս 21,181 ձայն
3. «Ուժեղ Հայաստան» դաշինք
   ≡ 23,2710 տոկոս 340,006 ձայն
4. Հայաստանի շնորհապետական կուսակցություն
   ≡ 2.0972 տոկոս 30,642 ձայն
5. «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցություն
   ≡ 1.7488 տոկոս 25,551 ձայն
6. «Միասնության թևեր» կուսակցություն
   ≡ 2.2954 տոկոս 33,537 ձայն
7. «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն
   ≡ 3,9893 տոկոս 58,287 ձայն
8. «Ազգային-ժողովրդավարական բևեռ» համահայկական կուսակցություն
   ≡ 0.3751 տոկոս 5,481 ձայն
9. «Քոչարի՝ ազգային վերածնունդ և ազգի զարթոնք» կուսակցություն
   ≡ 0.1359 տոկոս 1,986 ձայն
10. «Հայ ազգային կոնգրես» կուսակցություն
    ≡ 0.2151 տոկոս 3,143 ձայն
11. «Հանրապետություն» կուսակցություն
    ≡ 1.0819 տոկոս 15,808 ձայն
12. Քրիստոնեա-ժողովրդավարական կուսակցություն
    ≡ 0.1828 տոկոս 2,671 ձայն
13. «Ժողովրդավարական համախմբում» կուսակցություն
    ≡ 0.3606 տոկոս 5,269 ձայն
14. «Դեմոկրատիա, օրենք, կարգապահություն» (ԴՕԿ) կուսակցություն
    ≡ 1.7630 տոկոս 25,758 ձայն
15. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն
    ≡ 49,7456 տոկոս 726,819
16. «Հայաստան» կուսակցությունների դաշինք
    ≡ 9.9231 տոկոս 144,983 ձայն
17. «Հանուն Հանրապետության՝ ժողովրդավարության պաշտպաններ» կուսակցություն
    ≡ 0.4623 տոկոս 6,754 ձայն
18. «Լուսավոր Հայաստան» կուսակցություն
    ≡ 0.5091 տոկոս 7,439 ձայն:

Անճշտությունների գումարային չափը՝ 4331:

Վեց կուսակցությունների համատեղ հայտարարությունը ԿԸՀ–ի դիմաց

Հունիսի 7-ին կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքների և երկրում ստեղծված քաղաքական իրավիճակի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետությունում կայացած խորհրդարանական ընտրությունները տեղի են ունեցել այնպիսի պայմաններում, որոնք հիմնովին կասկածի տակ են դնում ընտրական գործընթացի ազատ, արդար և մրցակցային բնույթը:

Ներքոստորագրյալ քաղաքական ուժերս արձանագրում ենք, որ ընտրական ողջ գործընթացում՝ ներառյալ նախընտրական ժամանակահատվածում և քվեարկության օրը, տեղի են ունեցել համակարգային ու կազմակերպված խախտումներ, որոնք էական ազդեցություն են ունեցել ընտրողների ազատ կամարտահայտության, քաղաքական հավասար մրցակցության ապահովման և ընտրական ինստիտուտների նկատմամբ հանրային վստահության վրա, իսկ գործող վարչախմբի կողմից թույլ են տրվել ընտրական իրավունքի սկզբունքների խախտման ակնհայտ դրսևորումներ:

Մասնավորապես՝

1. Վարչական ռեսուրսի լայնածավալ կիրառում և ճնշումներ

Ամբողջ երկրում պետական և համայնքային պաշտոնյաների, ինչպես նաև նույն կառույցների, կրթական ու առողջապահական հաստատությունների, ուժային համակարգի ռեսուրսների ինտենսիվ ներգրավումը քաղաքական գործընթացներում խաթարել է հավասար մրցակցային պայմանները: Պետական համակարգի աշխատակիցների նկատմամբ գործադրված ճնշումները, աշխատանքից ազատման և իրավական հետապնդումների սպառնալիքները ձևավորել են կախվածության մթնոլորտ, ինչն անհամատեղելի է ազատ ընտրությունների սահմանադրական սկզբունքի հետ:

2. Քաղաքական հետապնդումներ և ձերբակալություններ

Նախընտրական քարոզարշավն ուղեկցվել է ընդդիմադիր գործիչների, ակտիվիստների և աջակիցների նկատմամբ քաղաքական հետապնդումների ալիքով: Իշխանությունները կիրառել են անհիմն ձերբակալությունների և կալանավորումների պրակտիկա՝ նպատակ ունենալով մեկուսացնել հանրային վստահություն վայելող գործիչներին և խաթարել ընդդիմադիր ընտրազանգվածի հետ տարվող կազմակերպչական աշխատանքները: Նման համակարգային բնույթ կրող գործողությունները հատկապես իրականացվել են նախընտրական քարոզարշավի ընթացքում՝ համատարած վախի մթնոլորտի սերմանման նպատակով:

3. Ընդդիմադիր շտաբների գործունեության նպատակաուղղված խոչընդոտում

Քվեարկության նախօրեին և բուն ընտրությունների օրը՝ հունիսի 7-ին, իրավապահ մարմինների կողմից իրականացվել է ընդդիմադիր ընտրական շտաբների աշխատանքների համատարած կաթվածահարում: Խուզարկությունները, անհիմն իրավական գործողություններով շտաբների բնականոն գործունեության խաթարումները և կազմակերպիչների ձերբակալությունները միտված են եղել ընտրական գործընթացի վերահսկման մեխանիզմների չեզոքացմանը:

4. Տեղեկատվական քարոզչամիջոցների չարաշահում

Հանրային և իշխանությանը հարող, նույնիսկ պետական մեդիառեսուրսները ողջ քարոզարշավի ընթացքում օգտագործվել են ընդդիմության վարկաբեկման, անմեղության կանխավարկածի նսեմացման, հանրային պառակտման և ատելության խոսքի տարածման համար: Տեղեկատվական դաշտում այլակարծության ճնշումը խախտել է հավասար մրցակցության բոլոր սահմանադրական նորմերը:

5. Ձայների հաշվարկի և ընտրողաբար ընտրական տեղամասերի արդյունքների անվավեր ճանաչում

Բազմաթիվ ընտրատեղամասերում քվեարկության արդյունքների կամայական խմբագրման և առանձին ընտրատեղամասերում այլ անօրինական գործիքակազմի իրացման դեպքեր են արձանագրվել, որոնք ազդեցություն են գործադրել ընտրության արդյունքների և քաղաքական ուժերի ձայների հարաբերակցության վրա: Նշվածը զուգորդվել է նախքան քվեարկության արդյունքների վերաբերյալ պաշտոնական տվյալների ներկայացումը վարչախմբի ղեկավարի կողմից ընտրությունների արդյունքներին ուղիղ միջամտությամբ:

Ուստի մենք հայտարարում ենք.

Ընտրությունների վերաբերյալ ներկայացված պաշտոնական տվյալները չեն արտացոլում ժողովրդի իրական կամքը և ընտրությունների ստույգ արդյունքները:

Նման պայմաններում արձանագրված արդյունքները չեն կարող հիմք հանդիսանալ լեգիտիմ և ժողովրդի մեծամասնության վստահությունը վայելող իշխանության ձևավորման համար:

Երկրում իրավիճակի հետագա ցանկացած էսկալացիայի ողջ պատասխանատվությունն ամբողջությամբ ընկնում է Նիկոլ Փաշինյանի և նրա վարչախմբի վրա:

Մենք շարունակելու ենք գործել բացառապես Սահմանադրության, օրենքների և ժողովրդավարական սկզբունքների շրջանակում՝ պաշտպանելով քաղաքացիների ազատ կամարտահայտության իրավունքը և Հայաստանի Հանրապետության պետականության ու ժողովրդավարության հիմնարար արժեքները:

Մեր ապագա որոշումներում և գործողություններում ելնելու ենք բացառապես այս իրողություններից:

14 ՀՈՒՆԻՍԻ 2026 Թ., ԵՐԵՎԱՆ
«ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ
«ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԼԵՌ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Արձանագրվել են ճնշումների և վախի մթնոլորտի մասին հաղորդումներ...

Արձանագրել ենք բազմաթիվ խնդիրներ, բայց պետք է արձանագրել, որ Հայաստանի ընտրողներին տրվել է իրական ընտրություն կատարելու հնարավորություն, թեև խիստ բևեռացված քարոզարշավի պայմաններում, Երևանում այս մասին հայտարարեց միջազգային դիտորդական առաքելության ներկայացուցիչ ԵԽԽՎ դիտորդ Յանես Լենարչիչը:

«Ցավոք, նրանք ստիպված էին այդ ընտրությունն անել աննախադեպ արտաքին միջամտության և ճնշումների պայմաններում»,– ասաց Յանես Լենարչիչը:

Նա ասաց, թե քարոզարշավը եղել է խիստ բևեռացված և առճակատային՝ ուղեկցվելով պարբերաբար հնչող պառակտիչ և սադրիչ հռետորաբանությամբ:

«Մենք չենք արձանագրել վարչական ռեսուրսների համակարգային չարաշահում տեղական մակարդակում, սակայն մեր դիտորդներն արձանագրել ու ստացել են բազմաթիվ հաղորդումներ ընտրողների, այդ թվում՝ հանրային ծառայողների նկատմամբ ճնշումների և խրախուսումների վերաբերյալ՝ քարոզչական միջոցառումներին մասնակցելու նպատակով, հիմնականում հենց իշխող կուսակցության կողմից»,– ասաց Լենարչիչը:

Նա ասաց, թե իրենց երկարաժամկետ դիտորդները Երևանից և մարզերի մեծ մասից հաղորդումներ են ստացել, որոնք նկարագրում են ընդդիմության կողմնակիցների շրջանում վախի մթնոլորտը:

«Այս հաղորդումները վերաբերում են ընդդիմադիր ակտիվիստների նկատմամբ ենթադրյալ ահաբեկումներին, կալանավորումներին: Որոշ տարածքներում դա ազդել է ընտրողների վրա»:

08.06.2026

Պետական կառույցի աշխատողների վրա ճնշումներ են եղել՝ մասնակցելու իշխանության հավաքներին

Պետական կառույցի աշխատողների վրա ճնշումներ են եղել՝ մասնակցելու իշխանության հավաքներին, մտահոգիչ է: Այս մասին ՀՀ ընտրությունների մասին միջազգային դիտորդների ասուլիսի ժամանակ ասել է ԵԱՀԿ կարճաժամկետ դիտորդական առաքելության հատուկ համակարգող Ֆարահ Քարիմին:

«Պետական կառույցի ապարատի ներկայացուցիչների վրա ճնշումները՝ մասնակցելու իշխող կուսակցության կազմակերպած միջոցառումներին, ինչպես նաև այն բոլոր սոցիալական և տնտեսական միջոցառումները, որոնք ձեռնարկվել էին, մեծ մտահոգություններ են արտահայտում նախընտրական քարոզարշավի ընթացքում հնարավորությունների ազատության հետ կապված:

Ողջ քարոզարշավի ընթացքում արտաքին ճնշումները մեծ ազդեցություն ունեցան նաև հենց ընտրողների վրա: Արշավը լի էր առճակատողական մոտեցումներով, բաժանություն բերող հռետորաբանությամբ, ձայները գնելու և այլ ընտրական խախտումների տարբեր մեղադրանքներով, որի արդյունքում ընդդիմադիր շատ ուժեր զերծ մնացին ակտիվորեն մասնակցելուց նախընտրական քարոզարշավին: Անբավարար վերահսկողությունը և քարոզարշավի ֆինանսական միջոցների կանոնակարգումը սահմանափակում էին թափանցիկությունը և հանրային վերահսկողության հնարավորությունները»,– նշել է Ֆարահ Քարիմին:

08.06.2026

Հունիսի 7-ի քվեարկության նախնական արդյունքները Սյունիքի մարզում՝ ըստ ԿԸՀ-ի

ԿԸՀ տարածած տեղեկատվության համաձայն՝ Սյունիքի մարզի ընտրողների թիվը կազմել է՝ 106 934:
Քվեարկությանը մասնակցել են՝ 71 484 (66,85%):
Անվավեր քվեաթերթիկ՝ 865:

Ընտրություններին մասնակցած քաղաքական ուժերին տրված ձայները բաշխվել են հետևյալ կերպ.

- «Ուժեղ Հայաստան» կուսակցություն –
  - 14524 (20,32%)
- «Միասնության թևեր» կուսակցություն –
  - 4987 (6,97 %)
- «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն –
  - 2066 (2,89 %)
- «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն –
  - 36048 (50,43 %)
- «Հայաստան» կուսակցությունների դաշինք –
  - 7248 (10,14 %):

***Հ.Գ.** Մի քանի այլ քաղաքական ուժերի օգտին տրված ձայների թվին կարող եք ծանոթանալ ըստ համայնքների՝ ստորև ներկայացվող տեղեկատվությունից:*

Գորիս համայնք

Ընտրողների թիվը՝ 22 819:
Քվեարակությանը մասնակցել է 14 453 հոգի կամ ընտրողների 63,3 տոկոսը:
Անվավեր է համարվել 182 քվեաթերթիկ:

Ընտրություններին մասնակցած քաղաքական ուժերին տրված ձայները բաշխվել են հետևյալ կերպ.

- «Ուժեղ Հայաստան» կուսակցություն –
  - 3641 (25,2 %),
- Հայաստանի շնորհապետական կուսակցություն –
  - 241 (1.7 %),
- «Միասնության թևեր» կուսակցություն –
  - 356 (2,5%),
- «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն –
  - 566 (3,9%),
- «Դեմոկրատիա, օրենք, կարգապահություն» կուսակցություն –
  - 197 (1,36 %),
- «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն –
  - 6969 (48,2 %),
- «Հայաստան» կուսակցությունների դաշինք –
  - 1398 (9,67 %),
- «Լուսավոր Հայաստան» կուսակցություն –
  - 277 (1,91 %):

Սյուս քաղաքական ուժերին տրված ձայները չենք ներառում՝ քիչ լինելու կամ չլինելու պատճառով:

Տաթև համայնք

Ընտրողների թիվն է՝ 4 281:
Քվերակությանը մասնակցել է 2 662 ընտրող (62,18 %):
Անվավեր է համարվել 23 քվեաթերթիկ:
Քաղաքական ուժերին տրված ձայները հետևյալ պատկերն ունեն:

- «Ուժեղ Հայաստան» –
  - 491 (18,4 %),
- «Միասնության թևեր» կուսակցություն –
  - 88 (3,3%),
- «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն –
  - 50 (1,9 %),
- «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն –
  - 1 592 (59,8 %),
- «Հայաստան» կուսակցությունների դաշինք –
  - 271 (10,18 %):

Տեղ համայնք

Ընտրողների թիվը՝ 4 693:
Քվերակությանը մասնակցել է՝ 3 290 (70,10 %) ընտրող:
Անվավեր քվեաթերթիկ՝ 57:
Ձայները բաշխվել են հետևյալ կերպ.

- «Ուժեղ Հայաստան» կուսակցություն –
  - 862 (26,2 %),
- «Միասնության թևեր» կուսակցություն –
  - 55 (1,7 %),
- «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն –
  - 94 (2,85 %),
- «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն –
  - 1703 (51,76 %),
- «Հայաստան» կուսակցությունների դաշինք –
  - 318 (9,7 %):

Կապան համայնք

Ընտրողների թիվը՝ 33 981:
Մասնակցել է քվեարկությանը՝ 23 166 (68,17 %) ընտրող:
Անվավեր քվեաթերթիկ՝ 276:
Ձայները՝ ըստ կուսակցությունների և դաշինքների՝

- «Ուժեղ Հայաստան» կուսակցություն –
  - 3 712 (16,02 %),
- «Միասնության թևեր» կուսակցություն –
  - 4095 (17,67 %),
- «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն –
  - 619 (2,67 %),
- «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն –
  - 10 669 (46,05 %),
- «Հայաստան» կուսակցությունների դաշինք –
  - 2092 (9,03 %):

Քաջարան համայնք

Ընտրողների թիվը՝ 6 354:
Քվեարկությանը մասնակցել է՝ 47 17 (74,2 %) ընտրող:
Անվավեր քվեաթերթիկ՝ 62:
Ձայները՝ ըստ կուսակցությունների և դաշինքների.

- «Բոլորին դեմ եմ» կուսակցություն –
  - 69 (1.5 %),
- «Ուժեղ Հայաստան» կուսակցություն –
  - 685 (14,52 %),
- «Շնորհապետական» կուսակցություն –
  - 59 (1,25 %),
- «Միասնության թևեր» կուսակցություն –
  - 173 (3,66 %),
- «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն –
  - 80 (1,7 %),
- «Դեմոկրատիա, օրենք, կարգապահություն» կուսակցություն -
  - 66 (1,4 %),
- «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն –
  - 2716 (57,57 %),
- «Հայաստան» կուսակցությունների դաշինք –
  - 622 (13,18 %):

Մեղրի համայնք

Ընտրողների թիվը՝ 9998:
Քվեարկությանը մասնակցել է՝ 6910 (69,11 %) ընտրող:
Անվավեր քվեաթերթիկ՝ 84:
Ձայները՝ ըստ կուսակցությունների և դաշինքների.

- «Բոլորին դեմ եմ» կուսակցություն -
  - 89 (1.3 %),
- «Ուժեղ Հայաստան» կուսակցություն –
  - 1981 (28,67 %),
- «Շնորհապետական» կուսակցություն –
  - 161 (2,3 %),
- «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցություն –
  - 85 (1,2 %),
- «Միասնության թևեր» կուսակցություն –
  - 90 (1,3 %),
- «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն –
  - 243 (3,51 %),
- «Հանրապետություն» կուսակցություն –
  - 226 (3,27 %),
- «Դեմոկրատիա, օրենք, կարգապահություն» կուսակցություն -
  - 94 (1,36 %),
- «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն –
  - 3320 (48,04 %),
- «Հայաստան» կուսակցությունների դաշինք –
  - 352 (5,09 %):

Սիսիան համայնք

Ընտրողների թիվը՝ 24 808:
Քվեարկությանը մասնակցել է՝ 16 286 (65,65 %) ընտրող:
Անվավեր քվեաթերթիկ՝ 181:
Ձայները՝ ըստ կուսակցությունների և դաշինքների.

- «Բոլորին դեմ եմ» կուսակցություն -
  - 155 (0,95 %),
- «Ուժեղ Հայաստան» կուսակցություն –
  - 3 152 (19,35 %),
- «Շնորհապետական» կուսակցություն –
  - 173 (1,06 %),
- «Միասնության թևեր» կուսակցություն –
  - 130 (0,79 %),
- «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն –
  - 414 (2,54 %),
- «Դեմոկրատիա, օրենք, կարգապահություն» կուսակցություն -
  - 152 (0,93 %),
- «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն –
  - 9079 (55,75 %),
- «Հայաստան» կուսակցությունների դաշինք –
  - 2 195 (13,48 %):

***Հ.Գ.** Պարզագույն հարց ԿԸՀ-ին՝ Սյունիքի մարզի ընտրողների թիվը 106 972 է, թե՞ 100 450:*
ԿԸՀ-ի կողմից ս.թ. մայիսի 31-ին հրապարակված ցուցակի համաձայն՝ մարզում ընտրելու իրավունք ունեցողների թիվը 100450 էր:
ԿԸՀ-ի կողմից՝ քվեարկության օրվա ընթացքում պարբերաբար (3 ժամը մեկ) սփռվող տեղեկատվության համաձայն՝ քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցող ընտրողների թիվ է հայտարարվել 106 972:
Տարբերությունը՝ 6522 ընտրող:
Կենտրոնական ընտրական հանձնաժողովը դեռևս պարզաբանում չի տվել ընտրողների թվի նման տարբերության վերաբերյալ:

//

Մի՞թե ՌԴ-ի ու Հայաստանի միջև տնտեսական պատերազմ է. իսկ եվրոպական շուկան շարունակում է մնալ անհասանելի

«Ռոսսելխոզնադզոր»-ը (Ռուսաստանի անասնաբուժական և բուսասանիտարական հսկողության դաշնային ծառայությունը) 2026 թ. հունիսի 2-ից ժամանակավոր սահմանափակումներ է մտցնում Հայաստանից բալի, կեռասի, ծիրանի, սալորի, դեղձի, նեկտարինի և խաղողի ներմուծման նկատմամբ: Այս մասին հաղորդագրություն է տարածել «Ռոսսելխոզնադզոր»-ի մամուլի ծառայությունը:

Ըստ հաղորդագրության՝ հայկական մրգերի Ռուսաստան մատակարարման ընթացքում խախտումների դեպքերն աճել են:

««Ռոսսելխոզնադզոր»-ը բազմիցս տեղեկատվություն է ուղարկել հայկական կողմին կարանտինային ապրանքների մատակարարման խախտումների վերաբերյալ՝ կապված ԵԱՏՄ անդամ պետությունների համար կարանտինային ապրանքների նույնականացման հետ», – նշվում է հաղորդագրության մեջ:

«Հայտնաբերումների թվի աճը վկայում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության լուծարման հետևանքների մասին, որի լիազորությունները կառուցվածքային բարեփոխումների արդյունքում փոխանցվել են Էկոնոմիկայի նախարարությանը: Հաշվի առնելով, որ վերջերս Հայաստանից ներմուծվող արտադրանքը չի համապատասխանում ԵԱՏՄ-ի և Ռուսաստանի բուսասանիտարական պահանջներին, կարելի է ենթադրել, որ ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը կառուցվածքային խնդիրներ ունի և չի կարողանում կատարել Գյուղատնտեսության նախարարության լուծարումից հետո իրեն վերապահված պարտականությունները», – հավելել է «Ռոսսելխոզնադզոր»-ը:

«Հաշվի առնելով վերոնշյալը՝ սկսած 2026 թ. հունիսի 2-ից ժամանակավոր սահմանափակումներ կմտցվեն Հայաստանի Հանրապետության ծագում ունեցող և այնտեղից առաքվող կորիզավոր մրգերի (ԵԱՏՄ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի կոդ 0809-ից՝ բալ, կեռաս, ծիրան, սալոր, դեղձ և նեկտարին) և թարմ խաղողի (ԵԱՏՄ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի կոդ 0806-ից) ներմուծման, ինչպես նաև այդ ապրանքների՝ ԵԱՏՄ անդամ պետություններ տարանցման նկատմամբ՝ մինչև առաքվող ապրանքների անվտանգությունն ապահովելու համար համապատասխան ալգորիթմի մշակումը», – ասվում է հաղորդագրության մեջ:

«Ռոսսելխոզնադզոր»-ը հավելել է, որ ստեղծված իրավիճակը վտանգում է Ռուսաստանի և ԵԱՏՄ-ի տարածքի բուսասանիտարական բարեկեցությունը, ինչպես նաև Ռուսաստանում արդյունաբերական այգեգործության, պտղաբուծության և խաղողագործության պետական աջակցության ծրագրերի իրականացումը:

Իր հերթին, «Ռուսպրոդսոյուզ» միավորման վարչության փոխնախագահ Դմիտրի Լեոնովը ՏԱՍՍ-ին հայտնել է, հայկական խաղողի մատակարարումները կարող են փոխարինվել Թուրքիայից, Ուզբեկստանից, Եգիպտոսից, Հնդկաստանից և Չինաստանից, բալինը՝ Սերբիայից և Մոլդովայից, նեկտարինինը՝ Թուրքիայից, Ուզբեկստանից, Եգիպտոսից, Հնդկաստանից և Չինաստանից, դեղձինը՝ Թուրքիայից, Ադրբեջանից, Ուզբեկստանից և Վրաստանից մատակարարումներով:

«Ռոսսելխոզնադզորը» սահմանափակումներ է մտցնում Հայաստանից ձկան և ձկնամթերքի արտահանման նկատմամբ: Հունիսի 2-ից Հայաստանը պետք է դադարեցնի Ռուսաստան արտահանման համար նախատեսված կենդանի ձկան և ձկնամթերքի անասնաբուժական սերտիֆիկացումը՝ բացառությամբ ստուգում անցած երկու ընկերությունների: Հաստատված երկու գործարաններից ստացվող ձկնամթերքը Ռուսաստան մուտք կգործի անվտանգության ցուցանիշների լաբորատոր մոնիթորինգի պայմանով: Գերատեսչությունը նշել է, որ իր անցկացրած ստուգումների արդյունքները գնահատվել են անբավարար, իսկ մի շարք ձեռնարկություններ հրաժարվել են ստուգումից:

«Ռոսսելխոզնադզորը» մայիսի 30-ից ժամանակավոր սահմանափակումներ է մտցնում Հայաստանից ծագող և Հայաստանից առաքվող թարմ լոլիկի, վարունգի, պղպեղի, կանաչեղենի և ելակի ներմուծման վրա՝ մինչև բեռնափոխադրվող արտադրանքի անվտանգությունն ապահովելու համապատասխան ալգորիթմի մշակումը: Այս մասին գրված է «Ռոսսելխոզնադզորի» պաշտոնական կայքում:

«Որոշումը կայացվել է Ռուսաստան հայկական պտուղ-բանջարեղենի մատակարարումների ժամանակ խախտումների հաճախակիացման կապակցությամբ և ֆիտոսանիտարական բարեկեցությունն ապահովելու նպատակով: Ստեղծված իրավիճակը սպառնալիք է ներկայացնում երկրի տարածքի ֆիտոսանիտարական վիճակին:

Բացի այդ, Հայաստանի իրավասու գերատեսչության կողմից նախկինում հայտնաբերված խախտումների վերաբերյալ համապատասխան միջոցներ չեն ձեռնարկվել:

Նախկինում ձեռք բերված պայմանավորվածությունների շրջանակում՝ 2026 թվականի մայիսի 21-ից մայիսի 27-ն ընկած ժամանակահատվածում «Ռոսսելխոզնադզորը» ստուգումներ է իրականացրել Հայաստանի ձեռնարկություններում, որի ընթացքում մի շարք խախտումներ են հայտնաբերվել, մասնավորապես՝ ջերմոցային տնտեսություններում ԵԱՏՄ անդամ պետությունների համար կարանտինային օբյեկտների առկայություն, ինչը հաստատվում է հայկական պտուղ-բանջարեղենի ներմուծման ժամանակ դրանց հայտնաբերման համակարգված դեպքերով՝ 2026 թվականի ընթացքում 181 դեպք:

Նաև, «Ռոսսելխոզնադզորի» տեղեկատվական համակարգի տվյալներով, մեծ քանակությամբ պտուղ-բանջարեղեն մատակարարվում է անհայտ սեփականության ձև ունեցող բազմաթիվ հայկական արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողների կողմից, որոնք խուսափում են կարանտինային ֆիտոսանիտարական հսկողություն անցնելուց: Նշվածը վկայում է այն մասին, որ հայ գործընկերները Ռուսաստան արտահանման ժամանակ արտադրանքի հետանձգելիության համակարգ չունեն»:

Ռոսպոտրեբնադզոր»-ը կարգադրել է Ռուսաստանում կասեցնել «Ջերմուկ» հանքային ջրի 64,5 միլիոն շշի վաճառքը:

Որոշումը պատճառաբանվում է պարտադիր տեխնիկական կանոնակարգերի խախտումներով:

Նշվում է, թե ստուգումների ընթացքում «Ջերմուկ»-ում հայտնաբերվել է հիդրոկարբոնատների, քլորիդների և սուլֆատների թույլատրելի մակարդակի գերազանցում:

2026 թվականի սկզբից Ռուսաստանում արգելափակվել է «Ջերմուկի» 38,4 միլիոն շշի վաճառքը՝ ինչպես մանրածախ, այնպես էլ առցանց վաճառքում:

Ռուսաստանի սպառողների պաշտպանության պետական մարմինը՝ «Ռոսպոտրեբնադզոր»-ը, հայտարարել է, թե հայտնաբերել է Հայաստանում արտադրվող անորակ ալկոհոլային խմիչքներ, և դրանց վաճառքը Ռուսաստանում կասեցվել է:

Ըստ կառույցի՝ պարտադիր պահանջներին չեն համապատասխանել «ՎԵԴԻ-ԱԼԿՈ»-ի, «Աբովյանի կոնյակի գործարան»-ի և «Շահնազարյան» գինու և կոնյակի տան արտադրանքը:

Նախօրեին էլ «Ռոսպոտրեբնադզոր»-ը հայտնեց, որ ժամանակավորապես կասեցրել է հայկական «Ջերմուկ» հանքային ջրի բոլոր խմբաքանակների ներկրումն ու վաճառքը Ռուսաստանում՝ դրանցում որոշ նյութերի նորմայից բարձր պարունակության պատճառաբանությամբ:

Ավելի վաղ Հայաստանի սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը հայտարարել էր, թե ստուգել է և խախտումներ չի հայտնաբերել «Ջերմուկ»-ում:

«Ռոսսելխոզնադզորը» ժամանակավորապես սահմանափակել է Հայաստանից նաև ծաղիկների ներմուծումը Ռուսաստան: Ըստ հաղորդագրության, «Ռոսսելխոզնադզորը» նախատեսում է ստուգել Հայաստանում գործող բուսաբուծական ձեռնարկությունները: Հայկական կողմը հաղորդել էր, որ ռուս մասնագետների խումբն արդեն ժամանել է Երևան:

Հայաստանից մատակարարումների հետ կապված խնդիրներ կան ոչ միայն ծաղիկների, այլև բանջարեղենի և մրգերի մասով, ըստ ՏԱՍՍ գործակալության, «Վեստի»-ի եթերում հայտարարել է «Ռոսսելխոզնադզորի» ղեկավար Սերգեյ Դանկվերտը:

Ռուս պաշտոնյան նշել է, որ հայկական ձեռնարկություններում ստուգումները կշարունակվեն ևս մեկ շաբաթ:

Ռոսսելխոզնադզորը 2026 թվականի մայիսի 22-ից ժամանակավոր սահմանափակումներ է մտցնում Հայաստանից ծագումով և առաքմամբ ծաղկային արտադրանքի ներմուծման վրա՝ մինչև ջերմոցային տնտեսությունների տեսչական ստուգումների ավարտը և դրանց արդյունքների վերլուծության ամփոփումը: Այս մասին գրված է Ռոսսելխոզնադզորի պաշտոնական կայքում:

Որոշումն ընդունվել է Ռուսաստանի ֆիտոսանիտարական բարեկեցությունը և արտահանման պոտենցիալը պաշտպանելու նպատակով:

Չնայած Հայաստանի Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից ներկայացված երաշխիքներին՝ ԵԱՏՄ-ի համար կարանտինային օբյեկտների հայտնաբերումը շարունակվում է: 96,2 միլիոն հատ ծաղկային արտադրանքի ներմուծման ժամանակ հայտնաբերվել է 135 դեպք: Դա կազմում է ողջ 2025 թվականի ընթացքում հայտնաբերումների ընդհանուր քանակի 77%-ը:

//

Ռաֆայել Մինասյանը կապանցու ոգու մարմնացումն էր

Լրացավ Կապանա տան արժանավոր զավակ, պետական ու քաղաքական գործիչ Ռաֆայել Մինասյանի 100-ամյա հոբելյանը: Մարդ, ում համար պաշտոնը երկիրը շենացնելու միջոց էր:

Կապան քաղաքի կառուցապատումն իրավացիորեն կապում են նրա անվան հետ: Կապանը՝ նրա ղեկավարելու տարիներին, երբեմնի գյուղաքաղաքից վերածվեց արդյունաբերական հզոր կենտրոնի: Դժվար է պատկերացնել՝ նրա պաշտոնավարման օրոք տարեկան 28 հազար քառակուսի մետր բնակելի մակերես էր շահագործման հանձնվում:

Հետագայում ստանձնեց Հայաստանի կոմունալ տնտեսության նախարարի պաշտոնը՝ այն ծառայեցնելով հայրենիքի բարգավաճմանը:

1988-ին, երբ աշխարհավեր երկրաշարժը փլատակների վերածեց Հայաստանի մեկ երրորդը, նա աճապարեց աղետի գոտի՝ ղեկավարելու շինարարական–վերականգնողական աշխատանքները:

Ազգասեր անձնավորության սիրտը չդիմացավ երկրաշարժի պատճառած վերքերին, և Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում իր հայրենակիցների եղեռնը տեսնելով, այն դադարեց բաբախել 1989 թվականի հունվարի 10-ին:

Երախտապարտ կապանցիներն ըստ արժանվույն գնահատեցին նրա վաստակն իր ժողովրդի հանդեպ:

Նրա անունը կրող փողոցի թիվ 14 շենքի հարևանությամբ իր ծննդյան օրը՝ մայիսի 15-ին, տեղի ունեցավ պետական ու քաղաքական գործչի կիսանդրու բացման արարողությունը (կիսանդրու հեղինակ՝ Գագիկ Ալեքսանյան, հարթաքանդակների և դիզայներական աշխատանքների հեղինակ՝ Անդրեաս Օհանջանյան, քանդակագործ՝ Էդգար Ստեփանյան):

Արարողությանը մասնակցում էին տարբեր սերնդի կապանցիներ, որոնց մեջ Ռաֆայել Մինասյանի ժամանակակիցներ, հոբելյարի զավակները, թոռները, ծոռները:

Կիսանդրու բացման պատիվը վերապահվեց Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանին և Ռաֆայել Մինասյանի որդի Աշոտ Մինասյանին:

Օրվա խորհուրդն իր խոսքում արժևորեց Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը՝ այն միտքն ընդգծելով, որ Ռաֆայել Մինասյանը հայրենի եզերքի հոգսերով ապրող եզակի անձնավորություն էր, իր քաղաքի տարեգրության մեջ անջնջելի հետք թողած անձնավորություն:

«Չկա մի ոլորտ, որ Մինասյանի պաշտոնավարման օրոք վերելք ապրած չլիներ: Լինելով ըստ էության կառուցող մարդ՝ մենք կարևոր համարեցինք նրա անունը կրող փողոցում հավերժացնել մեծ կապանցու հիշատակը՝ այդպիսով արժևորելով նրա վաստակը»,– ասաց Գևորգ Փարսյանը:

Հոր անունը հավերժացնելու համար Աշոտ

Մինասյանը երախտագիտություն հայտնեց բոլոր կապանցիներին՝ Ռաֆայել Մինասյանին սիրով ու հարգանքով հիշելու, նաև պատմության մեջ նրան արժանի տեղ հատկացնելու համար: Նա ընդգծեց այն հանգամանքը, որ հայրը Կապանի հանդեպ սերը պահպանեց ամբողջ կյանքի ընթացքում: Այս համատեքստում երախտագիտություն հայտնեց Կապանի հասարակությանը, Կապանի համայնքի ավագանուն, կարևոր և պատասխանատու որոշման համար: **«Դուք ոչ միայն հարգանքի տուրք եք մատուցում մի անձի, այլև պահպանում եք քաղաքի պատմական հիշողությունը և օրինակ ծառայում ապագա սերունդների համար: Անկեղծ շնորհակալությունս Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանին, քանզի այսպիսի քայլերը վկայում են, որ քաղաքը գնահատում է իր անցած ճանապարհը: Խորին երախտագիտությունս կիսանդրու հեղինակ Գագիկ Ալեքսանյանին»,**– գնահատանքի իր խոսքում նշեց Աշոտ Մինասյանը:

Երախտագիտության խոսքերից հետո փողային նվագախմբի հնչեցրած մեղեդիների ներքո արարողության մասնակիցները կարմիր վարդեր խոնարհեցին հոբելյարի կիսանդրու պատվանդանին:

Կիսանդրու բացման արարողությունից հետո «Սյունիք» կինոթատրոնում տեղի ունեցավ Ռաֆայել Մինասյանի կյանքին ու գործունեությանը նվիրված հուշ–ցերեկույթ: Արժանավոր մարդու, պետական ու քաղաքական գործչի մասին հուշերով հանդես եկան ՀԿԿ Ղափանի շրջկոմի նախկին առաջին քարտուղար Ռոլանդ Ղոնյանը, «Խուստուփ» բնապահպանական հասարակական կազմակերպության նախագահ Վլադիկ Մարտիրոսյանը, Կապանի պատվավոր քաղաքացի Սվետլանա Գևորգյանը:

Անմիջական մթնոլորտ էր դահլիճում: Բազում հուշ–պատառիկներն ամբողջացրին Ռաֆայել Մինասյանի կերպարը: Բազմաթիվ գնահատանքի խոսքերից առանձնացնենք մեկը՝ «Ռաֆայել Մինասյանը գնահատել գիտեր մարդուն, իսկը՝ ժողովրդական անձնավորություն էր»:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության և բարգավաճման» նախագծի (ԹՐԻՓՓ) վերաբերյալ ռազմավարական համագործակցության մասին շրջանակային համաձայնագիր

- հիմք ընդունելով, որ 2025 թվականի օգոստոսի 8-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի վկայությամբ Հայաստանի Հանրապետության վարչապետը և Ադրբեջանի Հանրապետության նախագահը ստորագրել են Հայաստանի Հանրապետության վարչապետի և Ադրբեջանի Հանրապետության նախագահի համատեղ հռչակագիրն Ամերիկայի Միացյալ Նահանգների Վաշինգտոն քաղաքում տեղի ունեցած իրենց հանդիպման արդյունքների վերաբերյալ (Համատեղ հռչակագիր)՝ Հարավային Կովկասում տևական խաղաղության առաջմղման համար,
- հիմք ընդունելով, որ Ամերիկայի Միացյալ Նահանգները և Հայաստանի Հանրապետությունը ցանկանում են ունենալ տևական գործընկերություն իրենց երկու ժողովուրդների և կառավարությունների միջև,
- հիմք ընդունելով, որ Ամերիկայի Միացյալ Նահանգների և Հայաստանի Հանրապետության նպատակն է, որ «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության և բարգավաճման» նախագիծը (ԹՐԻՓՓ) նպաստի տարածաշրջանային խաղաղությանը, կայունությանը, բարգավաճմանը և ինտեգրմանը, ինչպես նաև ստեղծի առանցքային առևտրային ուղի ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ Ամերիկայի Միացյալ Նահանգների համար նոր շուկաներ բացելու համար, և տնտեսական օգուտներ ստեղծի հայաստանյան ընկերությունների համար ԹՐԻՓՓ-ի կառուցման և գործարկման ընթացքում,
- հիմք ընդունելով, որ Ամերիկայի Միացյալ Նահանգները և Հայաստանի Հանրապետությունը ճանաչում են, որ Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև խաղաղության հետագա ինստիտուցիոնալացումը, այդ թվում՝ միջպետական սահմանների սահմանազատումն ու սահմանագծումը, Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորումը, ԱՄՆ-ի կայուն ներգրավվածությունը և տարածաշրջանային համագործակցությունն ու կայունությունը կնպաստեն ԹՐԻՓՓ-ի հաջողությանը,
- հիմք ընդունելով, որ Ամերիկայի Միացյալ Նահանգների պետական քարտուղարը և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը 2026 թվականի հունվարի 13-ին հրապարակել են «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության և բարգավաճման» (ԹՐԻՓՓ) նախագծի՝ Հայաստան-ԱՄՆ իրականացման շրջանակի (ԻՇ) հրապարակման վերաբերյալ համատեղ հայտարարությունը՝ 2025 թվականի օգոստոսի 8-ին Սպիտակ տանը ձեռք բերած հանձնառությունները կյանքի կոչելու և Հայաստանի և Ադրբեջանի բարգավաճումն ու անվտանգությունն ամրապնդելու, ինչպես նաև ԱՄՆ առևտուրը խթանելու համար,
- հիմք ընդունելով, որ Կողմերը ճանաչում են, որ Հայաստանը լիակատար ինքնիշխանություն, տարածքային ամբողջականություն և իրավազորություն է պահպանում Հայաստանի ինքնիշխան տարածքում ԹՐԻՓՓ-ի իրականացման բոլոր գոտիների նկատմամբ, և հաստատում են, որ սույն Համաձայնագիրը և ԹՐԻՓՓ-ը նպատակ ունեն ծառայելու որպես առանցքային մեխանիզմներ հանուն խաղաղ և ինքնիշխան Հայաստանի,
- հիմք ընդունելով, որ ԹՐԻՓՓ-ը միտված է Հայաստանի տարածքում անխոչընդոտ, բազամոդալ տարանցիկ փոխկապակցվածության ստեղծմանը՝ նպաստելով տարածաշրջանային խաղաղությանը, կայունությանը և ինտեգրմանը՝ պետությունների ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և իրավազորության հարգանքի հիման վրա՝ միևնույն ժամանակ կապելով Ադրբեջանի հիմնական մասն իր Նախիջևանի Ինքնավար Հանրապետության հետ և ստեղծելով Տրանսկասպյան առևտրային երթուղու կենսական հանգույց, ակնկալվում է, որ ԹՐԻՓՓ-ը միջազգային և ներպետական փոխկապակցվածության փոխադարձ առավելություններ կստեղծի Հայաստանի Հանրապետության համար,
- վկայակոչելով Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև 1992 թվականի ապրիլի 2-ին Վաշինգտոնում ստորագրված Ներդրումների խրախուսման համաձայնագիրը, 1992 թվականի դեկտեմբերի 15-ին Երևանում ստորագրված «Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև համագործակցության վերաբերյալ մարդասիրական և տեխնիկատնտեսական օգնության վերահսկումը հեշտացնելու մասին» համաձայնագիրը, ինչպես նաև Ամերիկայի Միացյալ Նահանգների և Հայաստանի Հանրապետության միջև 1992 թվականի սեպտեմբերի 23-ին Վաշինգտոնում ստորագրված «Ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» համաձայնագիրը,

Վերոշարադրյալի հիման վրա՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները (Միացյալ Նահանգներ) և Հայաստանի Հանրապետությունը (Հայաստան) (յուրաքանչյուրը առանձին՝ Կողմ, իսկ միասին՝ Կողմեր) սույնով կնքում են «ԹՐԻՓՓ-ի մասին» սույն շրջանակային համաձայնագիրը (Համաձայնագիր), ինչպես սահմանված է ստորև:

Հոդված 1. Սահմանումները

Սույն Համաձայնագրի նպատակներով՝

1. «Բաժնետերեր» նշանակում է ԹՃԸ ԱՄՆ և Հայաստան:
2. «Բաժնետիրական համաձայնագիր» նշանակում է Միացյալ Նահանգների և Նյու Յորք նահանգի օրենքներով կարգավորվող առևտրային գործիք, որը կարգավորելու է ԹՃԸ-ի Բաժնետերերի որոշակի իրավունքներ և պարտավորություններ և ԹՃԸ-ի կառավարման և ղեկավարման հետ կապված հարցեր:
3. «Հատուկ նշանակության կազմակերպություն (ՀՆԿ)» նշանակում է դուստր կազմակերպություն, որը պետք է ԹՃԸ-ի կողմից ստեղծվի ԹՐԻՓՓ-ի առանձին բաղադրիչի իրականացման նպատակով:
4. «ԹՃԸ» նշանակում է ԹՐԻՓՓ-ի զարգացման ընկերություն՝ ԹՃԸ ԱՄՆ-ի և Հայաստանի միջև համատեղ ձեռնարկություն, որը Հայաստանում պետք է հիմնադրվի որպես բաժնետիրական ընկերություն:
5. «ԹՃԸ ԱՄՆ» նշանակում է առևտրային կազմակերպություն, որը պետք է հիմնադրվի Դելավեր նահանգում որպես Միացյալ Նահանգների գործակալություն հանդիսացող՝ Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման ֆինանսական կորպորացիային (ՁՖԿ) ամբողջությամբ պատկանող դուստր ձեռնարկություն:
6. «ԹՃԸ-ի կանոնադրություն» նշանակում է Հայաստանի օրենսդրությամբ կարգավորվող առևտրային գործիք, որով հիմնադրվում է ԹՃԸ-ն:
7. «ԹՐԻՓՓ-ի իրականացման գոտի» նշանակում է Հայաստանի այն հողատարածքը, որը պետք է օգտագործվի ԹՐԻՓՓ-ի կոնկրետ նախագծի համար, և որը Կողմերը համատեղ կորոշեն ԹՃԸ-ի հետ խորհրդակցությունների անցկացմամբ՝ դրա հիմնադրումից հետո, հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են, ի թիվս այլնի, իրագործելիության և նախագծային ուսումնասիրությունները, ինչպես նաև քաղաքական նկատառումները (միասին՝ «ԹՐԻՓՓ-ի իրականացման գոտիներ»):
8. «ԹՐԻՓՓ նախագիծ» նշանակում է Հայաստանում իրականացվող կոնկրետ նախագիծ, որը Կողմերի փոխադարձ հաստատմամբ ԹՐԻՓՓ-ի շրջանակներում է, այդ թվում, բայց չսահմանափակվելով ԹՐԻՓՓ-ի հետևյալ բաղադրիչներով՝ երկաթուղային, ճանապարհային, նավթատար և գազատար խողովակաշարերի, օպտիկամանրաթելային և էներգետիկ նախագծեր (միասին՝ «ԹՐԻՓՓ նախագծեր»):

Հոդված 2. Համաձայնագրի նպատակները

1. Սույն Համաձայնագրի նպատակը և Կողմերի քաղաքականությունն է խորացնել Կողմերի միջև տնտեսական համագործակցությունը՝ ԹՐԻՓՓ-ի իրականացման և դրա հաջողության ապահովման նպատակով՝ 3-րդ հոդվածի 2-րդ կետում նշված գործիքների ներդրմամբ:
2. Կողմերը պետք է համագործակցեն ԹՐԻՓՓ-ի իրականացումը հնարավոր դարձնելու ուղղությամբ՝ միջազգային, միջպետական և ներպետական տրանսպորտային փոխկապակցվածության, տարածաշրջանային և համաշխարհային առևտրի ընդլայնման, ինչպես նաև տարածաշրջանում խաղաղության, կայունության և բարգավաճման ամրապնդման նպատակով:

Հոդված 3. Համատեղ ձեռնարկություն ստեղծելու հնարավորության ապահովումը

1. Կողմերի քաղաքականությունն է միասին աշխատել ԹՐԻՓՓ-ի ստեղծման ուղղությամբ, և երկու Կողմերն ուղղակիորեն շահագրգռված են ԹՐԻՓՓ-ի հաջողությամբ:
2. Կողմերի մտադրությունն է, որ ԹՃԸ ԱՄՆ-ի և Հայաստանի կողմից հիմնադրվի համատեղ ձեռնարկություն՝ ԹՃԸ անվանմամբ, որում ԹՃԸ ԱՄՆ-ին պատկանում է 74% վերահսկող բաժնեմասնակցություն, իսկ Հայաստանին՝ 26% բաժնեմասնակցություն: Կողմերը նախատեսում են, որ ԹՃԸ-ն կաջակցի ԹՐԻՓՓ-ի իրականացմանը: ԹՃԸ-ի ստեղծման նպատակով Կողմերը նախատեսում են, որ ԹՃԸ ԱՄՆ-ն և Հայաստանը ստորագրեն երկու առանձին փաստաթուղթ՝ ա) ԹՃԸ-ի կանոնադրությունը և բ) Բաժնետիրական համաձայնագիրը:
3. Կողմերը նախատեսում են, որ Բաժնետերերը նախնական 49-ամյա ժամկետի ավարտից հետո հնարավորություն ունենան փոխադարձ համաձայնությամբ երկարաձգելու 6-րդ հոդվածի 2-րդ կետում նշված իրավունքները ևս 50 տարով. այդ դեպքում Հայաստանի բաժնեմասնակցությունը ԹՃԸ-ում պետք է ավելանա մինչև 49%, իսկ ժամկետի երկարաձգումը պետք է լինի Հայաստանի կողմից միակ հատուցումը ԹՃԸ-ում Հայաստանի բաժնեմասնակցության նշված ավելացման համար: Հայաստանի բաժնեմասնակցության ավելացումը պետք է լինի ԹՃԸ ԱՄՆ-ի կողմից միակ հատուցումը ժամկետի երկարաձգման համար:
4. Կողմերը նախատեսում են, որ Բաժնետերերը, ըստ անհրաժեշտության, ԹՃԸ-ի կանոնադրության մեջ և Բաժնետիրական համաձայնագրում պետք է սահմանեն որոշումների կայացման հատուկ մեխանիզմներ՝ փոխադարձ համաձայնություն պահանջող և Կողմե-

Երին վերապահված հարցերի համար, որոնք պետք է մանրամասն ներկայացվեն ԹՃԸ-ի կանոնադրության մեջ և (կամ) Բաժնետիրական համաձայնագրում:

5. Կողմերին վերապահված հարցերը վերաբերում են հետևյալին, սակայն չեն սահմանափակվում դրանցով՝ բաժնետերերի մասնակցություն (այդ թվում՝ ԹՃԸ-ում վերահսկողության փոփոխությունը, բաժնետոմսերի փոխանցումը ԹՃԸ-ում, ՀՆԿ-ների հիմնադրումը և դրանց նկատմամբ սեփականությունը), խոշոր պայմանագրային և ֆինանսական գործարքներ կնքելու մասին որոշումներ, կոնցեսիոն իրավունքների շնորհում և կոնցեսիոն համաձայնագրերի վերջնական պայմանների սահմանում և համատեղ հռչակագրին, ազգային անվտանգությանը վերաբերող և քաղաքական բնույթի այլ հարցեր: ՀՆԿ-ների մակարդակում համանման հարցերը նույնպես պետք է դիտարկվեն որպես փոխադարձ համաձայնություն պահանջող Կողմերին վերապահված հարցեր, որոնք պետք է մանրամասն ներկայացվեն ԹՃԸ-ի կանոնադրության մեջ և (կամ) Բաժնետիրական համաձայնագրում:
6. ԹՃԸ-ի կամ դրա ՀՆԿ-ների կողմից անհրաժեշտ գործարքների կնքմանն աջակցելու նպատակով Հայաստանը համաձայնում է բացառություններ նախատեսել բաժնետիրական ընկերությունների, գնումների և պետություն-մասնավոր գործընկերության ձևավորման վերաբերյալ Հայաստանի օրենսդրությամբ: Հայաստանը համաձայնում է, որ այդ բացառությունները, ըստ անհրաժեշտության, պետք է նշվեն Բաժնետիրական համաձայնագրում և (կամ) ԹՃԸ-ի կանոնադրության մեջ:
7. Կողմերը նախատեսում են, որ ԹՃԸ ԱՄՆ-ն շարունակելու է մշտապես հանդիսանալ Միացյալ Նահանգների սեփականությունը և գտնվել նրա վերահսկողության ներքո, և որ որևէ երրորդ կողմ չի կարող ձեռք բերել ԹՃԸ ԱՄՆ-ի նկատմամբ սեփականության իրավունքներ:

Հոդված 4. ՀՆԿ-ները

1. Կողմերն ակնկալում են, որ ՀՆԿ-ները գործելու են որպես ԹՃԸ-ի դուստր ձեռնարկություններ՝ ԹՐԻՓՓ-ի բաղադրիչներից յուրաքանչյուրը որպես ԹՐԻՓՓ նախագիծ իրականացնելու նպատակով:
2. 3-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերին համապատասխան՝ Կողմերը նախատեսում են, որ ԹՃԸ-ն յուրաքանչյուր ՀՆԿ-ի ստեղծման և դրանում ունեցած իր բաժնեմասնակցության միջոցով իրեն վերապահելու է որոշակի հարցերի առնչությամբ որոշումների կայացման լիազորությունը, որոնք որոշվելու են ԹՃԸ-ի կողմից:
3. Հայաստանը համաձայնում է, որ ԹՃԸ-ն լիազորված կլինի ընտրելու երրորդ կողմերի՝ ՀՆԿ-ների կողմից ստեղծվող յուրաքանչյուր ԹՐԻՓՓ ծրագրի իրականացմանն աջակցելու համար, այդ թվում՝ այն երրորդ կողմերը, որոնք հանդես կգան որպես կոնցեսիոներներ, հովանավորներ, օպերատորներ, կապալառուներ, ինչպես նաև տվյալ ԹՐԻՓՓ նախագծի ՆԳՇ (նախագծման գնումների և շինարարական) ծառայություններ մատուցողներ:
4. Յուրաքանչյուր ՀՆԿ-ի ստեղծումից հետո՝ ԹՃԸ-ի կողմից ծանուցվելուց հետո, Հայաստանը 4-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխանող և ԹՃԸ-ի կողմից հաստատված ՀՆԿ-ի հետ կկնքի կոնցեսիոն կամ այլ համաձայնագրեր՝ համաձայն 3-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերի:

Հոդված 5. ԹՐԻՓՓ-ի համակարգումը և ԹՃԸ-ի գործունեության ապահովումը

1. Հայաստանը կնշանակի պատասխանատու բարձրաստիճան կոնտակտային անձ՝ առաջնորդելու Հայաստանի կառավարության մասնակցությունը սույն Համաձայնագրի, ԹՃԸ-ի կանոնադրության և Բաժնետերերի համաձայնագրի կատարման ու իրականացման գործընթացներում՝ Հայաստանի պետական մարմինների միջև արդյունավետ համակարգումն ապահովելու նպատակով:
2. Սույն Համաձայնագրի նպատակների իրականացման համար Հայաստանի կառավարությունը պետք է ապահովի՝
   - ա) համապատասխան օրենսդրության ընդունումը, փոփոխությունը, պահպանումն ու կիրարկումը.
   - բ) ԹՃԸ-ի և դրա ՀՆԿ-ների համար լիցենզիաների, թույլտվությունների, հաստատումների ժամանակին տրամադրումը և կարգավորող գործընթացների իրականացումը:
3. Միացյալ Նահանգները համաձայնում է, որ կնշանակի բարձրաստիճան կոնտակտային անձ՝ ԹՐԻՓՓ-ի հետ կապված քաղաքականության ցանկացած հարց քննարկելու նպատակով:
4. Միացյալ Նահանգները մտադիր է ձեռնարկել քայլեր՝ Հայաստանի հետ համատեղ ԹՃԸ-ի հիմնադրման համար թույլտվություն ստանալու նպատակով, ինչը ներառում է Կոնգրեսին ծանուցումը և ՁՖԿ-ի տնօրենների խորհրդից անհրաժեշտ հաստատման ստացումը:
5. Հայաստանը հաստատում է, որ իր Սահմանադրությանը համապատասխան՝ Հայաստանի օրենսդրության հետ որևէ հակասության դեպքում կկիրառվի սույն Համաձայնագիրը:
6. Միացյալ Նահանգները մտադիր է տրամադրել ֆինանսավորում և (կամ) աջակցել ԹՐԻՓՓ նախագծերի համար ֆինանսավորման ապահովմանը՝ ֆինանսական միջոցների առկայության դեպքում ու կիրառելի պահանջներին համապատասխան կամ առևտրային պայմաններով՝ պետական և ոչ պետական ներդրողների կողմից:

Հոդված 6. Հողօգտագործման/կառուցապատման իրավունքները/կոնցեսիաները

1. Հայաստանը կձեռնարկի Հայաստանի օրենսդրությանը համապատասխանող բոլոր անհրաժեշտ միջոցները և հնարավորինս սեղմ ժամկետներում, որպեսզի՝ ա) ապահովի, որ ԹՐԻՓՓ-ի իրականացման գոտիների երկայնությամբ գտնվող հողամասերը Հայաստանի սեփականությունն են կամ կարող են դառնալ Հայաստանի սեփականությունը, և բ) ապահովի, որ այդ հողամասերը զերծ լինեն ցանկացած ծանրաբեռնվածությունից կամ երրորդ անձանց իրավունքներից, ինչպես նաև կրի այդ գործընթացների հետ կապված բոլոր ֆինանսական ծախսերը:
2. ԹՃԸ-ի հիմնադրումից և ԹՐԻՓՓ-ի իրականացման յուրաքանչյուր գոտին որոշելուց հետո Հայաստանը ԹՃԸ-ին տրամադրում է 49 (քառասունինը) տարի նախնական ժամկետով հողօգտագործման բացառիկ իրավունքներ, կառուցապատման իրավունքներ, հարակից թույլտվություններ և մյուս բոլոր իրավունքները, որոնք համատեղ կորոշվեն Հայաստանի կառավարության և ԹՃԸ-ի կողմից՝ համապատասխան ԹՐԻՓՓ ծրագրի արդյունավետ զարգացման, շահագործման և (կամ) պահպանման համար, ըստ կիրառելիության, և այդ իրավունքները լրիվությամբ փոխանցելի կլինեն ՀՆԿ-ներին:
3. Հայաստանը համաձայնում է, որ ԹՃԸ-ին թույլատրվում է մշակել կոնցեսիայի մանրամասն պայմանները, որոնք կիրազեկեն կոնցեսիոների ընտրությունը՝ 4-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով:
4. Հայաստանը համաձայնում է, որ՝
   - ա) կմնա ցանկացած կոնցեսիայի միակ տրամադրողը և, հետևաբար, չի համարվի, որ ԹՃԸ-ն ամբողջությամբ կամ մասամբ ստանձնել է Հայաստանի պարտավորությունները,
   - բ) չի համարի, որ ԹՃԸ-ն կոնցեսիոներ է կամ որևէ կոնցեսիոն պայմանագրով ստանձնել է ՀՆԿ-ների կամ կոնցեսիոներների որևէ պարտավորություն:
5. Կողմերն ակնկալում են, որ կառուցապատման իրավունքների գործողության ժամկետի ավարտից հետո կամ այն դեպքում, երբ ԹՃԸ-ն որևէ պատճառով դադարեցնի իր գործունեությունը, կամ Բաժնետերերի փոխադարձ համաձայնությամբ ԹՃԸ-ի ունեցած մնացորդային ցանկացած իրավունք վերադարձվում է Հայաստանին՝ առանց Հայաստանի կողմից որևէ վճարի կամ հատուցման:
6. Սույն Համաձայնագրում ոչինչ չի խոչընդոտում Հայաստանի ինքնիշխան տարածքում որևէ անձի կողմից այնպիսի ենթակառուցվածքի կառուցմանը և շահագործմանը, որը ԹՐԻՓՓ նախագիծ չէ:

Հոդված 7. Արտակարգ իրավիճակներին արձագանքումը և ենթակառուցվածքների անվտանգությունը

1. Կողմերը հաստատում են, որ Հայաստանը պահպանում է լիակատար իշխանություն Հայաստանի ինքնիշխան տարածքում, և որ Հայաստանի իշխանությունները գործելու նախապատվություն ունեն ԹՐԻՓՓ-ի իրականացման գոտիներում արտակարգ բոլոր իրավիճակների առաջացման դեպքում:
2. Կողմերը մտադիր են, որ Հայաստանն ունենա ԹՐԻՓՓ-ի իրականացման գոտիների ենթակառուցվածքների անվտանգության պլանները հաստատելու իրավունք: Եթե այդ պլանները ներառեն մասնավոր անվտանգության աշխատակիցներին աշխատանքի ընդունում, ապա այդ աշխատակիցները պետք է ենթակա լինեն Հայաստանի կողմից լիցենզավորման:

Հոդված 8. Մաքսային հսկողությունը/սահմանային անվտանգությունը

1. Կողմերն ընդունում են, որ Հայաստանը պահպանում է լիակատար ինքնիշխանություն և իրավազորություն իր սահմանների և մաքսային գործառնությունների նկատմամբ, պարտավորվում է ապահովել սահմանների արդյունավետ կառավարում և ունի իր սահմանային հսկողության բոլոր կետերում ֆիզիկական ներկայություն պահպանելու իրավունք: Հայաստանը, իր ներպետական օրենսդրությանը և միջազգային համաձայնագրերին համապատասխան, շարունակում է պատասխանատու լինել և տրամադրել համապատասխան ենթակառուցվածքներ հետևյալի համար՝
   - ա) անվտանգություն և իրավապահ գործունեություն,
   - բ) սահմանային հսկողություն և սահմանային անվտանգություն,
   - գ) մաքսային և միգրացիոն հսկողություն,
   - դ) հարկերի և տուրքերի փոխանցում պետական բյուջե,
   - ե) պետական տեղեկատվական համակարգեր, և
   - զ) պետական վարչարարություն և վերահսկողություն:
2. Հայաստանը կգործադրի իր լավագույն ջանքերը՝ սահմանային անվտանգության և մաքսային հսկողության ժամանակակից ընթացակարգեր ընդունելու, պահպանելու և դրանք օպտիմալացնելու համար՝ միաժամանակ պահպանելով Հայաստանի ինքնիշխանությունն ու իրավազորությունը, կօգտագործի թվային գործիքներ՝ ԹՃԸ-ի և դրա ՀՆԿ-ների արդյունավետ աշխատանքը և ԹՐԻՓՓ-ի փոխգործակցելիությունը տարածաշրջանային տարանցիկ ցանցերի հետ դյուրացնելու համար: Սա կարող է ներառել այնպիսի քայլերի ձեռնարկում, որոնք անհրաժեշտ են ԹՐԻՓՓ նախագծերի մաքսային և միգրացիոն գործառությունների «ֆրոնտ օֆիս - բեք օֆիս» («ընդունարան» - «գրասենյակ») գործառական մոդելի իրականացման համար՝ ԻՇ-ին և Համատեղ հռչակագրի սկզբունքներին համապատասխան:
3. Հայաստանը համաձայնում է օգտվել մասնավոր օպերատորների («ֆրոնտ օֆիս») ծառայություններից՝ ԹՐԻՓՓ-ի իրականացման գոտիների համապատասխան սահմանային անցակետերում հաճախորդների առերես սպասարկման ծառայություններ մատուցելու համար՝ Հայաստանի և ԹՃԸ-ի փոխադարձ համաձայնությամբ:
4. Միացյալ Նահանգները մտադիր է համագործակցել Հայաստանի սահմանային անվտանգության բարելավման ուղղությամբ, ինչպես ամրագրված է «Խաղաղության խաչմերուկ» նախագծի կարողությունների զարգացման ոլորտում գործընկերության վերաբերյալ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև 2025 թվականի օգոստոսի 8-ին Վաշինգտոնում ստորագրված փոխըմբռնման հուշագրում:
5. Կողմերը մտադիր են միասին գործել՝ ապահովելու, որ ԹՐԻՓՓ-ի իրականացման գոտիներում սահմանային անվտանգությանն առնչվող բոլոր գործընթացներն ու ընթացակարգերն իրականացվեն ԹՐԻՓՓ-ի բարեհաջող իրագործմանը նպաստող եղանակով՝ Հայաստանի օրենսդրությամբ թույլատրված կարգով:

Հոդված 9. Հարկումը

1. Հայաստանը համաձայնում է, որ ԹՃԸ-ի կողմից՝ որպես Հայաստանի ռեզիդենտից ԹՃԸ ԱՄՆ-ին՝ որպես Միացյալ Նահանգների ռեզիդենտի բաշխված շահաբաժինները Հայաստանում ազատվում են հարկումից՝ պայմանով, որ ԹՃԸ ԱՄՆ-ի վերջնական սեփականատերը Միացյալ Նահանգների կառավարությունն է:
2. Հայաստանը համաձայնում է, որ ԹՃԸ-ն ՀՆԿ-ների կողմից ԹՃԸ-ին բաշխված շահութաբաժինների մասով Հայաստանում հարկ չի վճարելու:
3. Հայաստանը համաձայնում է, որ ԹՃԸ-ն ԹՃԸ-ի կամ ՀՆԿ-ի բաժնետոմսերի օտարման դեպքում Հայաստանում կապիտալի հավելաճի հարկ չվճարի:
4. Հայաստանը համաձայնում է, որ ԹՃԸ-ն և ՀՆԿ-ները Հայաստանում որևէ հարկ չեն վճարելու 6-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված ՝ Հայաստանի կառավարության կողմից ԹՃԸ-ին կամ ԹՃԸ-ի կողմից ՀՆԿ-ներին իրավունքների փոխանցման գործարքների համար:

Հոդված 10. Վեճերի կարգավորումը

1. Կողմերը կձգտեն համաձայնության հասնել սույն Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման վերաբերյալ և բոլոր հնարավոր ջանքերը կգործադրեն՝ համագործակցության ու խորհրդակցությունների միջոցով դրա իրականացման վրա հնարավոր ազդեցություն ունեցող ցանկացած հարցի փոխադարձաբար ընդունելի լուծմանը հասնելու նպատակով:
2. Սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման առնչությամբ վեճ ծագելու դեպքում այն պետք է կարգավորվի փոխադարձ խորհրդակցությունների միջոցով:

Հոդված 11. Տեխնիկական դրույթներ

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր ներքին ընթացակարգերը ավարտելու մասին Կողմերի միջև փոխանակվող վերջին հայտագրի ստացման օրվանից:
2. Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:
3. Սույն Համաձայնագրի գործողությունը կարող է դադարեցվել Կողմերից ցանկացածի կողմից՝ մյուս Կողմին գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով: Սույն Համաձայնագրի գործողության դադարեցումն ուժի մեջ է մտնում այդ գրավոր ծանուցումն ուղարկելու օրվանից 1 տարի հետո»:

***Հ.Գ.** 2026 թ. մայիսի 26-ին Արարատ Միրզոյանն ու ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն նախաստորագրել էին վերոնշյալ շրջանակային համաձայնագիրը:*
2026 թ. հունիսի 4-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը տեղեկացրել է այդ փաստաթղթի ստորագրման մասին՝ նշելով. «Վայրկյաններ առաջ ձեր աչքի առջև ստորագրեցի ԹՐԻՓՓ-ի վերաբերյալ Հայաստան-ԱՄՆ շրջանակային համաձայնագիրը: Հիշում եք՝ օրեր առաջ այն նախաստորագրվել էր իմ և ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոյի կողմից՝ իր Հայաստան կատարած այցի ժամանակ:
Հիմա պետքարտուղար Ռուբիոն իր ստորագրություններն է դրել համաձայնագրի տակ, և առաքվել է փաստաթուղթը Հայաստան: Այժմ ես էլ հայկական կողմի ստորագրությունները դրեցի: Սրանով հեռավար ստորագրման գործընթացը ավարտված է, և համաձայնագիրը պատրաստ է վավերացման»:

//

Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև կարևորագույն հանքանյութերի և հազվագյուտ հանածոների արդյունահանման և մշակման ոլորտում մատակարարման ապահովման շրջանակային հուշագիր

Քանի որ կարևորագույն հանքանյութերը կենսական նշանակություն ունեն առաջադեմ տեխնոլոգիաների արտադրության համար

Քանի որ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ամերիկայի Միացյալ Նահանգների (այսուհետ՝ «Միացյալ Նահանգներ» կամ «ԱՄՆ») Կառավարությունը (այսուհետ՝ «Մասնակիցներ») նպատակ ունեն աջակցել չմշակված և մշակված կարևորագույն հանքանյութերի մատակարարմանը, որոնք կարևոր են երկու երկրների արտադրական և պաշտպանական արդյունաբերությունների համար,

Քանի որ Մասնակիցները նախատեսում են իրականացնել դա տնտեսական քաղաքականության գործիքների և համակարգված ներդրումների միջոցով՝ արագացնելու բազմազան, իրացվելի և արդար շուկաների զարգացումը կարևորագույն հանքանյութերի համար,

Քանի որ Մասնակիցների նպատակը աջակցելն է երկու երկրներին՝ ապահովելու կարևորագույն հանքանյութերի մատակարարման շղթաների դիմակայունությունը և անվտանգությունը՝ ներառյալ արդյունահանումը, տարանջատումը և մշակումը իրենց համապատասխան տարածքներում,

Քանի որ Մասնակիցները մտադիր են օգտվել կարևորագույն հանքանյութերի ներքին արդյունահանման և մշակման իրենց ընթացիկ գործունեության, այդ թվում՝ 2026 թվականից և դրանից հետո հասանելի նոր հզորությունների ընձեռած հնարավորություններից:

Քանի որ Մասնակիցները հասել են կարևորագույն հանքանյութերի արդյունահանման և մշակման ոլորտում հետևյալ ընդհանուր քաղաքականության շրջանակի վերաբերյալ փոխըմբռնման:

Բաժին I

Կարևորագույն հանքանյութեր

1. Մատակարարման ապահովում. Մասնակիցները մտադիր են ուսումնասիրել համագործակցության խորացման ուղիները, որպեսզի արագացնեն առաջադեմ տեխնոլոգիաների արտադրության համար անհրաժեշտ կարևորագույն հանքանյութերի ապահով մատակարարումը իրենց համապատասխան արդյունաբերական բազաների համար: Սա ներառում է առկա քաղաքականության գործիքակազմի օգտագործումը, ինչպես նաև արդյունաբերական պահանջարկի և պահուստավորման ենթակառուցվածքները: Մասնակիցները նաև ճանաչում են «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության և բարգավաճման» (ԹՐԻՓՓ) կարևորությունը՝ Հարավային Կովկասից և Կենտրոնական Ասիայից կարևորագույն հանքանյութերի տարանցումն ապահովելու գործում:

2. Ներդրումներ արդյունահանման, մշակման և վերականգնման մեջ. Մասնակիցները մտադիր են մոբիլիզացնել պետական և մասնավոր հատվածի աջակցությունը՝ ներառյալ կապիտալ և գործառնական ծախսեր՝ երաշխիքների, վարկերի, բաժնետիրական ներդրումների, մատակարարման պայմանագրերի վերջնականացման, ապահովագրության կամ կարգավորիչ դյուրացումների միջոցով՝ ազգային օրենսդրության ու կարգավորումներին համապատասխան:

ա. Ծրագրերի ընտրություն. Մասնակիցները մտադիր են համատեղ կերպով նույնականացնել հետաքրքրություն ներկայացնող նախագծերը՝ մատակարարման շղթաների բացերը հասցեագրելու համար: Առաջնահերթություն տրվելու է Հայաստանի Հանրապետությունում տարանջատման, վերամշակման, ավելացված արժեք ստեղծող մշակման կարողությունների և հանքերի վերականգնման ծրագրերին:

բ. Ֆինանսավորում. Սույն Շրջանակային հուշագրի ամսաթվի օրվանից սկսած վեց ամսվա ընթացքում, Մասնակիցները մտադիր են ուսումնասիրել միջոցներ, հնարավորության պարագայում խթանելու պոտենցիալ նշանակալի ֆինանսավորման տրամադրումը յուրաքանչյուր երկրում իրականացվող ծրագրերի համար, որոնց արդյունքում նախատեսվում է արտադրել վերջնական արտադրանք՝ Միացյալ Նահանգների և Հայաստանի Հանրապետության գնորդներին մատակարարելու նպատակով:

գ. Ներդրումային աջակցություն. Մասնակիցները մտադիր են համատեղ աշխատել նոր կամ հատուկ մեխանիզմների ստեղծման վրա՝ կարևորագույն հանքանյութերի և հազվագյուտ հանածոների մատակարարման շղթաները ամրապնդելու համար: Դա ներառում է մեխանիզմներ, որոնք կդյուրացնեն Հայաստանի Հանրապետության կազմակերպություններին տեխնոլոգիաների փոխանցումը՝ արդյունահանման և մշակման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

դ. Առաջնահերթ դիտարկում. Թեև յուրաքանչյուր Մասնակից կարող է որոշել, արդյոք որևէ նախագիծ նպատակահարմար է ներդրում կատարելու համար, Մասնակիցները՝ ներքին օրենսդրության համաձայն, ակնկալում են ունենալ առաջնահերթ հնարավորություն՝ իրականացնելու ներդրումներ այն կարևորագույն հանքանյութերի ակտիվներում, որոնք կարող են վաճառվել Հայաստանի Հանրապետությունում կամ Հայաստանի Հանրապետությունում գրանցված կամ կենտրոնակայան ունեցող ընկերության կողմից:

3. Թույլտվություններ. Մասնակիցները մտադիր են դիտարկել այնպիսի միջոցների ձեռնարկումը, որոնք ուղղված են թույլտվությունների տրամադրման ժամկետների և գործընթացների արագացմանը, պարզեցմանը կամ արդիականացմանը, այդ թվում՝ կարևորագույն հանքանյութերի և հազվագյուտ հանածոների արդյունահանման, տարանջատման և վերամշակման համար թույլտվություններ ստանալու գործընթացների մասով՝ իրենց համապատասխան ներքին կարգավորիչ համակարգերի շրջանակում և կիրառելի օրենքի համաձայն:

4. Գնագոյացման մեխանիզմներ. Մասնակիցները մտադիր են աշխատել՝ պաշտպանելու իրենց համապատասխան կարևորագույն հանքանյութերի և հազվագյուտ հանածոների շուկաները ոչ շուկայական քաղաքականություններից և անարդար առևտրային պրակտիկաներից: Սա ներառում է, ըստ անհրաժեշտության, քաղաքականության մշակում գնային շրջանակի ձևավորման համար, որը թույլ կտա ունենալ բազմազանեցված, թափանցիկ և դիմակայուն մատակարարման շղթաներ: Մասնակիցները նաև մտադիր են համագործակցել միջազգային գործընկերների հետ՝ աջակցելու պատասխանատու և դիմակայուն կարևորագույն հանքանյութերի շուկաներին և հասցեագրել ոչ շուկայական քաղաքականությունները՝ համաձայն միջազգային պայմանագրերի և այլ պարտադիր իրավական ուժ ունեցող բազմակողմ փաստաթղթերի շրջանակներում իրենց ստանձնած պարտավորությունների:

5. Ակտիվների վաճառք. Մասնակիցները մտադիր են անցկացնել խորհրդակցություններ՝ ձևավորելու նոր կամ ամրապնդելու ազգային կարողությունները և դիվանագիտական գործիքները՝ ազգային անվտանգության հիմքով կարևորագույն հանքանյութերի և հազվագյուտ հանածոների ակտիվների վաճառքները վերանայելու, կանխարգելելու կամ թույլատրելու նպատակով:

6. Թափոնների վերամշակում և վերականգնում. Մասնակիցները մտադիր են խրախուսել ներդրումները հանքանյութերի վերամշակման տեխնոլոգիաներում և համատեղ աշխատել՝ ապահովելու կարևորագույն հանքանյութերի և հազվագյուտ հանածոների թափոնների կառավարումը՝ մատակարարման շղթաների բազմազանեցմանը աջակցելու նպատակով:

7. Երրորդ կողմերի հետ համագործակցություն. Մասնակիցները մտադիր են, ըստ անհրաժեշտության, համագործակցել երրորդ կողմերի հետ՝ մատակարարման շղթաների անվտանգությունն ապահովելու և առկա համագործակցության մեխանիզմներն օգտագործելու նպատակով:

8. Երկրաբանական քարտեզագրում և ինստիտուցիոնալ գործընկերություն. Մասնակիցները մտադիր են համագործակցել՝ աջակցելու Հայաստանի Հանրապետությունում, Միացյալ Նահանգներում և փոխադարձաբար համաձայնեցված այլ վայրերում հանքային պաշարների քարտեզագրմանը՝ կարևորագույն հանքանյութերի բազմազանեցված մատակարարման շղթաներին աջակցելու նպատակով:

ա. Կարողությունների զարգացում. Մասնակիցները մտադիր են ստեղծել տեխնիկական գործընկերություն Միացյալ Նահանգների կառավարության և Հայաստանի Հանրապետության համապատասխան մարմնի միջև՝ աջակցելու Հայաստանի ազգային երկրաբանական ծառայության ստեղծմանը և դրա կարողությունների զարգացմանը: Ակնկալվում է, որ այս համագործակցությունը կկենտրոնանա հասանելի տվյալների և գիտական լավագույն փորձի փոխանակման, տվյալների հավաքագրման չափանիշների արդիականացման և առաջադեմ երկրաբանական գնահատման մեթոդներով անձնակազմի վերապատրաստման վրա:

բ. Տվյալներ. Մասնակիցները մտադիր են տնօրինել Մասնակիցների տարածքին առնչվող բոլոր վերհանված երկրաբանական տվյալները՝ կիրառելի օրենքի համաձայն: Սույն Շրջանակային հուշագրի նպատակների համար, նման տվյալների ցանկացած փոխանակում կկարգավորվի փոխադարձաբար համաձայնեցված տվյալների փոխանակման արձանագրություններով, որոնք կհարգեն Մասնակիցների ազգային անվտանգությունը և սեփականության իրավունքները:

9.Աշխատուժի զարգացում. Սույն Շրջանակային հուշագրի նպատակներին աջակցելու համար՝ Մասնակիցները մտադիր են հիմնել փոխանակման ծրագրեր և վերապատրաստման նախաձեռնություններ՝ բարձրացնելու հայ մասնագետների որակավորումը ժամանակակից հանքարդյունաբերական ինժեներիայի, մետաղաձուլության և շրջակա միջավայրի կառավարման ոլորտներում:

Բաժին II

Ընդհանուր դրույթներ

1. Ծրագրի ավարտին հաջորդող վերլուծություն. Ակնկալվում է, որ Մասնակիցների համապատասխան մարմինները կիրականացնեն ծրագրի ավարտին հաջորդող վերլուծություն և դրա իրագործման գնահատում: Վերլուծության կոնկրետ բովանդակությունը կձևավորվի Մասնակիցների միջև՝ նրանց համապատասխան ներքին օրենսդրությանը համապատասխան:

2. **Հանդիպումներ**. Մասնակիցները մտադիր են հանդիպել՝ առցանց կամ ֆիզիկական ձևաչափով, մյուս Մասնակցի գրավոր խնդրանքը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում:

3. Կոնտակտային անձինք. Մասնակիցները մտադիր են իրենց համապատասխան հաստատությունների ներսում նշանակել կոնտակտային անձանց՝ սույն Շրջանակային հուշագրի իրականացման համակարգումը ապահովելու համար:

4. Դադարեցում. Ցանկացած Մասնակից կարող է դադարեցնել իր մասնակցությունը սույն Շրջանակային հուշագրում՝ մյուս Մասնակցին տրամադրելով գրավոր ծանուցում: Եթե այլ բան նշված չէ, նման դադարեցումը ուժի մեջ կմտնի գրավոր ծանուցումը ստանալուց հետո երեսուներորդ օրը:

5. Ոչ պարտադիր բնույթ. Սույն Շրջանակային հուշագիրը սահմանում է քաղաքականության և ծրագրային գործողությունների ծրագիր, որը չի ստեղծում կամ չի հաստատում որևէ իրավունք կամ պարտավորություն ներքին կամ միջազգային իրավունքի ներքո, չի առաջացնում որևէ իրավական վարույթ և չի ստեղծում որևէ իրավաբանորեն պարտադիր կամ կիրառելի պարտավորություն՝ բացահայտ կամ ենթադրյալ:

26 ՄԱՅԻՍԻ 2026 Թ.

Փայտաշեն տնակից մինչև ժամանակակից կրթօջախ. Քաջարանի արվեստի դպրոցը 60 տարեկան է

Հունիսի 2-ին Քաջարանի արվեստի դպրոցը նշեց հիմնադրման 60-ամյակը:

Հոբելյանական միջոցառումը համախմբել էր դպրոցի տարբեր սերունդների ներկայացուցիչներին՝ նախկին և ներկա տնօրենների, ուսուցիչների, շրջանավարտների, աշակերտների, ծնողների, ինչպես նաև համայնքի ղեկավարությանն ու մշակութային ոլորտի ներկայացուցիչների:

Միջոցառման մեկնարկին հյուրերին դիմավորեցին աղ ու հացով: Այնուհետև դահլիճում անցկացվեց հոբելյանական հանդիսավոր միջոցառումը՝ նվիրված դպրոցի 60-ամյա գործունեությանն ու ձեռքբերումներին:

Հանդիսության ընթացքում ներկայացվեցին դպրոցի հիմնադրման պատմությունը և անցած ուղին: Նշվեց, որ 60 տարի առաջ Քաջարանի երաժշտական կրթօջախը գործունեությունը սկսել է համեստ պայմաններում՝ փայտաշեն տնակում, մեկ դաշնամուրով և մի քանի աշակերտով: Տասնամյակների ընթացքում դպրոցը շարունակաբար զարգացել է՝ ընդլայնելով բաժինների շրջանակը, ավելացնելով աշակերտների թիվն ու դառնալով համայնքի մշակութային կյանքի կարևոր կենտրոններից մեկը:

Տոնական միջոցառման ընթացքում ցուցադրվեց դպրոցի պատմությունը ներկայացնող տեսաֆիլմ, որում արտացոլվեց կրթօջախի անցած ճանապարհը՝ սկսած 1960 թվականից, երբ այն գործում էր որպես Կապանի 1-ին երաժշտական դպրոցի մասնաճյուղ:

Դպրոցի տնօրեն Արմինե Թումանյանի խոսքով՝ կրթօջախը 1966 թվականին դարձավ ինքնուրույն դպրոց: Սկզբում գործում էր միայն դաշնամուրային բաժինը, սակայն տարիների ընթացքում բացվեցին նոր բաժիններ, ինչի արդյունքում դպրոցը վերածվեց բազմապրոֆիլ արվեստի կենտրոնի:

Այսօր Քաջարանի արվեստի դպրոցում սովորում է շուրջ 340 աշակերտ, աշխատում՝ 42 ուսուցիչ: Գործում են երաժշտական, գեղարվեստի, պարարվեստի, թատերարվեստի բաժիններ, ինչպես նաև ազգային և դասական բազմաթիվ նվագարանների բաժիններ՝ դաշնամուր, ջութակ, քանոն, սանթուր, քյամանչա, շվի, դհոլ, վոկալ և այլ մասնագիտություններ:

Տնօրենի խոսքով՝ վերջին տարիներին

դպրոցն արձանագրել է զգալի հաջողություններ:

«Մեր երեխաները մասնակցում են հանրապետական և միջազգային մրցույթների ու փառատոների, պատվով ներկայացնում Քաջարանը և վերադառնում մրցանակներով»,- նշեց Արմինե Թումանյանը:

Նա ընդգծեց նաև, որ դպրոցն առանձնահատուկ դեր ունի համայնքի մշակութային կյանքում.

«Սա մեր քաղաքի միակ արվեստի դպրոցն է, որն էական դեր է խաղում մշակութային ակտիվ կյանքի ապահովման և զարգացման գործում»:

Իր ելույթում դպրոցի տնօրեն Արմինե Թումանյանը շնորհակալություն հայտնեց բոլոր նրանց, ովքեր տասնամյակներ շարունակ իրենց ներդրումն են ունեցել կրթօջախի կայացման ու զարգացման գործում:

«60-ամյա երկար ճանապարհ է անցել դպրոցը: Եղել են դժվարություններ, փորձություններ, սակայն մենք կարողացել ենք հաղթահարել դրանք և այսօր ունենք դպրոց, որը մեր քաղաքի հպարտություններից մեկն է»,- ասաց նա:

Հոբելյանական միջոցառման ընթացքում շնորհավորական խոսքով հանդես եկավ Քաջարան համայնքի ղեկավար Մանվել Փարամազյանը՝ նշելով, որ տասնամյակների

ընթացքում դպրոցը դարձել է մշակույթի ու կրթության կարևոր օջախ:

«Քաջարանի արվեստի դպրոցը մի դարբնոց է, որի դռները չեն փակվել անգամ 1990-ականների դժվար տարիներին: Այսօր արդեն ունենք հիմնովին վերանորոգված, ժամանակակից պայմաններով և տեխնիկայով համալրված կրթօջախ, որի հաջողությունները ոգևորում են բոլորիս», - ասաց համայնքի ղեկավարը:

Քաջարան համայնքի ղեկավարը շնորհակալագրերով պարգևատրեց դպրոցի նախկին և ներկա ղեկավարներին, երկարամյա մանկավարժներին և կրթօջախի կայացման ու զարգացման գործում նշանակալի ներդրում ունեցած անձանց:

Հոբելյանի առթիվ Մանվել Փարամազյանը դպրոցին նվիրեց նաև նոր երաժշտական գործիքներ՝ երկու դաշնամուր՝ մեկը էլեկտրոնային՝ համալրելով կրթօջախի նյութատեխնիկական բազան:

Հոբելյանի մասնակիցներին տեսաուղերձով շնորհավորեց նաև դպրոցի հիմնադիր տնօրեն Սվետլանա Նամչևաձեն, ով (հարգելի պատճառով չէր կարողացել ներկա գտնվել միջոցառմանը) հիշեց դպրոցի ստեղծման առաջին տարիներն ու իր բարեմաղթանքները հղեց ներկայիս սերնդին:

«Երբ եկա Քաջարան, դպրոցում ընդամենը մի քանի աշակերտ կար և միայն դաշնամուրի դասարան: Հետագայում բացվեցին նոր բաժիններ, դպրոցը զարգացավ ու դարձավ այն, ինչ այսօր է: Շնորհավորում եմ բոլորիդ և մաղթում նոր հաջողություններ»,– նշեց նա:

Շնորհավորական ելույթներով հանդես եկան նաև դպրոցի նախկին տնօրեններ Լիանա Հակոբյանը և Ալբերտ Առաքելյանը, իսկ Սուրեն Խաչատրյանը կատարեց երաժշտական համար և կրթօջախին նվիրեց ջութակ:

Միջոցառման ավարտին ներկայացվեց դպրոցի պատմությանը նվիրված փոքրիկ ցուցահանդես, որտեղ տեղ էին գտել տարբեր տարիների լուսանկարներ՝ արտացոլելով կրթօջախի անցած ուղին և հիշարժան դրվագները:

60 տարվա ընթացքում Քաջարանի արվեստի դպրոցը կարևոր դեր է ունեցել համայնքի մշակութային կյանքում՝ կրթելով արվեստի տարբեր ոլորտներում իրենց առաջին քայլերն արած բազմաթիվ սաներ: Այսօր դպրոցը շարունակում է իր գործունեությունը՝ պահպանելով ձևավորված ավանդույթները և արձանագրելով նոր ձեռքբերումներ:

Արվեստի դպրոցի կայացման գործում մեծ դեր է խաղացել ու խաղում «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ ընկերությունը: Պատահական չէ, որ ընկերության գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլին և ընկերության կայուն զարգացման գծով տնօրեն Արմեն Ստեփանյանը արժանացան «Քաջարանի արվեստի դպրոց-60» անվանական հուշամեդալների:

ԻԶԱ ԱՍՇԱՏՐՅԱՆ

Արվեստի դպրոցի կայացման գործում մեծ դեր է խաղացել ու խաղում «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ ընկերությունը: Պատահական չէ, որ ընկերության գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլին և ընկերության կայուն զարգացման գծով տնօրեն Արմեն Ստեփանյանը արժանացան «Քաջարանի արվեստի դպրոց-60» անվանական հուշամեդալների:

Հայաստանի հանքարդյունաբերության և մետալուրգիայի ասոցիացիան դարձել է Հանքարդյունաբերության և մետաղների միջազգային խորհրդի (ICMM) անդամ

Հայաստանի հանքարդյունաբերության և մետալուրգիայի ասոցիացիան (ՀՀՄԱ) պաշտոնապես դարձել է Հանքարդյունաբերության և մետաղների միջազգային խորհրդի (ICMM) անդամ՝ նշանավորելով կարևոր հանգրվան Հայաստանի հանքարդյունաբերության համար և վերահաստատելով ոլորտի հանձնառությունը պատասխանատու հանքարդյունաբերության, կայուն զարգացման և միջազգային առաջատար չափանիշներին համապատասխան գործունեության նկատմամբ:

ICMM-ի նախագահ և գլխավոր գործադիր տնօրեն Ռոհիթեշ (Ռո) Դհավանը, ողջունելով ՀՀՄՄ-ի անդամակցությունը, նշել է.

«Մեծ պատիվ է Հայաստանի հանքարդյունաբերության և մետալուրգիայի ասոցիացիային ողջունել ICMM-ում՝ մեր ոլորտի և Հայաստանի զարգացման ճանապարհի համար կարևոր մի ժամանակահատվածում:

Հանքանյութերի և մետաղների նկատմամբ պահանջարկն աննախադեպ աճում է, և միաժամանակ մեծանում են ակնկալիքները, որ դրանք պետք է արտադրվեն պատասխանատու կերպով: ՀՀՄԱ-ի անդամակցությունը ICMM-ին արտացոլում է չափանիշների բարձրացման և էներգետիկ փոխակերպման պահանջները բավարարելու ընդհանուր հանձնառությունը՝ առանց վնասելու համայնքներին կամ բնությանը»:

Հայաստանի հանքարդյունաբերության և մետալուրգիայի ասոցիացիայի նախագահ Վարդան Ջհանյանը նշել է.

«ՀՀՄԱ-ի առաքելության առանցքային ուղղություններից է Հայաստանում ժամանակակից, պատասխանատու և գլոբալ մրցունակ հանքարդյունաբերության ձևավորմանը նպաստելը: ICMM-ի անդամ դառնալը կարևոր հանգրվան է այդ ճանապարհին: Այն Հայաստանի հանքարդյունաբերությունը կապում է պատասխանատու հանքարդյունաբերության ոլորտի համաշխարհային առաջատար հարթակի հետ և ստեղծում է գիտելիքների փոխանակման, մասնագիտական կարողությունների ամրապնդման և միջազգային լավագույն փորձի ներդրման արժեքավոր հնարավորություններ:

Մենք հպարտ ենք միանալու մի համայնքի, որը կիսում է ժամանակակից և արդյունավետ կառավարվող հանքարդյունաբերության տեսլականը, և ակնկալում ենք թե՛ սովորել համաշխարհային լիդերների փորձից, թե՛ ներկայացնել Հայաստանի փորձը միջազգային մասնագիտական քննարկումներում»:

Մենք հպարտ ենք միանալու մի համայնքի, որը կիսում է ժամանակակից և արդյունավետ կառավարվող հանքարդյունաբերության տեսլականը, և ակնկալում ենք թե՛ սովորել համաշխարհային լիդերների փորձից, թե՛ ներկայացնել Հայաստանի փորձը միջազգային մասնագիտական քննարկումներում»:

Հանքարդյունաբերության և մետաղների միջազգային խորհուրդը (ICMM) աշխարհի առաջատար հանքարդյունաբերական կառույցներից է, որը միավորում է կազմակերպություններին՝ աշխարհի 26 ամենախոշոր հանքային ընկերություններին, ինչպես նաև ոլորտային միավորումներ՝ 39 ազգային ու պրոֆեսիոնալ ասոցիացիաներին, որոնք պատասխանատու են հանքարդյունաբերության զարգացման համար: Կազմակերպության անդամները միասին ներկայացնում են համաշխարհային հանքարդյունաբերության զգալի մասը և հանձնառու են ոլորտի բնապահպանական, սոցիալական և կառավարչական (ESG) արդյունավետության շարունակական բարելավմանը:

Կազմակերպությունը սերտորեն համագործակցում է ՄԱԿ-ի մարմինների, Միջազգային ֆինանսական հաստատությունների և հեղինակավոր հարթակների հետ՝ նպատակ ունենալով բարձրացնել բնապահպանական, սոցիալական և կորպորատիվ կառավարման (ESG) չափանիշները ողջ աշխարհում:

Մեր ասոցիացիայի անդամակցությունը ICMM-ին կբացի զարգացման նոր հորիզոններ՝ լավագույն փորձի ներդրում, որը կապահովի հասանելիություն պատասխանատու հանքարդյունաբերության համաշխարհային առաջատար ստանդարտներին և մեթոդոլոգիաներին:

Այն նաև ենթադրում է գլոբալ ինտեգրում՝ Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտը համապատասխանեցվում է միջազգայնորեն ճանաչված բնապահպանական և սոցիալական բարձր չափանիշներին: ՀՀՄԱ-ի անդամակցությունը այս խորհրդին կարող է դառնալ հարթակ՝ միջազգային խոշորագույն դերակատարների հետ փորձի փոխանակման և նոր գործընկերային կապերի հաստատման համար:

01.06.2026

ՁՊՄԿ-ն միացել է ՄԱԿ-ի գլոբալ պայմանագրին

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը միացել է ՄԱԿ-ի «Գլոբալ պայմանագիր» միջազգային նախաձեռնությանը (United Nations Global Compact): Այն կորպորատիվ կայունության միջազգային խոշորագույն նախաձեռնություն է, որը միավորում է հազարավոր ընկերությունների, որոնք հավատարիմ են պատասխանատու բիզնես վարքագծին և կայուն զարգացմանը:

ՁՊՄԿ-ի տարածած հաղորդագրության մեջ նշվում է, որ միանալով ՄԱԿ-ի համաշխարհային պայմանագրին՝ ՁՊՄԿ-ն իր գործունեությունն ու բիզնես պրակտիկաները համապատասխանեցնում է նախաձեռնության տասը սկզբունքներին, որոնք վերաբերում են մարդու իրավունքներին, աշխատանքային հարաբերություններին, շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատու վերաբերմունքին և հակակոռուպցիոն գործունեությանը՝ միաժամանակ նպաստելով ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների (SDG) իրագործմանը:

Ընդգծվում է, որ այս որոշումն արտացոլում է ՁՊՄԿ-ի հանձնառությունը՝ բարելավելու իր բնապահպանական, սոցիալական և կորպորատիվ կառավարման (ESG) կատարողականը և ապահովելու իր գործունեության շարունակական համապատասխանեցումը կայունության միջազգային չափանիշներին և լավագույն փորձին:

«ՄԱԿ-ի «Գլոբալ պայմանագիր» նախաձեռնությանը միանալն արտացոլում է մեր հանձնառությունը՝ շարունակաբար կատարելագործելու մեր գործունեությունը և մեր գործընթացները համապատասխանեցնելու պատասխանատու կորպորատիվ վարքագծի միջազգային սկզբունքներին: Որպես Հայաստանի առաջատար հանքարդյունաբերական ընկերություն՝ մենք գիտակցում ենք մեր պատասխանատվությունն արժեք ստեղծելու ոչ միայն արտադրության, այլև արդյունավետ կառավարման, շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատու մոտեցման, անվտանգ աշխատավայրի և շահագրգիռ կողմերի հետ կառուցողական ներգրավվածության միջոցով»,– նշել է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլին:

Նախաձեռնության շրջանակում ՁՊՄԿ-ն տարեկան կիրապարակի Առաջընթացի հաղորդակցություն (Communication on Progress, CoP), որը առաջընթացի վերաբերյալ հաշվետվություն է տասը սկզբունքների իրականացման ուղղությամբ, և հնարավորություն է տալիս համեմատել արդյունքները հանքարդյունաբերության և մետաղների ոլորտի առաջատար միջազգային ընկերությունների հետ:

«ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագրին միանալը ևս մեկ կարևոր հանգրվան է ՁՊՄԿ-ի կայուն զարգացման չափանիշները, կորպորատիվ կառավարումը և հաշվետվողականությունը բարելավելու ճանապարհին՝ շահագրգիռ կողմերի համար երկարաժամկետ արժեք ստեղծելու հանձնառությամբ:

Նաև տեղեկացնենք, որ ընկերությունը վերջերս ստացել է աշխարհի առաջատար ESG վարկանշային գործակալություններից մեկի կողմից վարկանիշ 2024 թ. համար: Երկու տարվա ընթացքում (2022-24) ՁՊՄԿ-ն բարելավել է իր ESG գնահատականը 20 կետով՝ գերազանցելով մետաղների և հանքարդյունաբերության ոլորտի համաշխարհային միջին ցուցանիշը և արձանագրելով զգալի առաջընթաց կայունության կատարողականի և կառավարման գործելակերպերի բարելավման ուղղությամբ: Այս արդյունքները հրապարակային չեն, սակայն ՁՊՄԿ-ն նախատեսում է դիմել 2025 հաշվետու տարվա համար հրապարակային ESG վարկանիշի, որի հրապարակումը սպասվում է 2026 թվականին»,– եզրափակվում է հաղորդագրությունը:

11.06.2026

«Ագարակի ՊՄԿ»-ն 2026 թ. երեք ամսում 2 մլրդ 23 մլն դրամի հարկ ու տուրք է վճարել

Ծավի դպրոցի նախկին շենքը

Ծավի և Վերին Խոտանանի դպրոցների ոդիսականը

Քանիցս առիթ ենք ունեցել ասելու՝ ՀՀ կառավարությունը խոստացել էր մինչև 2026 թվականը հանրապետությունում իրականացնել 300 դպրոցի և 500 մանկապարտեզի կառուցում, վերակառուցում կամ հիմանորոգում, որը, ինչպես և սպասվում էր, ձախողվել է...

Սյունիքի մարզի որոշ դպրոցներ նույնպես ընդգրկվել էին տվյալ նախագծում, այդ թվում՝ Ծավի և Վերին Խոտանանի դպրոցները:

Սակայն երկու դեպքում էլ տեղի է ունեցել անհավանականը՝ քանդել են դպրոցական մասնաշենքերը, բայց նոր շենքեր չեն կառուցվում...

Ծավի դպրոցից տեղեկացնում են, որ դեռևս 2025-ի մարտ ամսին դպրոցի երկու մասնաշենքից մեկը քանդել են, որի տեղում նորը պիտի կառուցվեր:

Եվ հիմքը փորելուց հետո շինարարները հեռացել են, շինարարությունը դադարեցվել է:

Իրավիճակը նույնն է Վերին Խոտանանում. քանդել են դպրոցական շենքը, նորի հիմքերը գցել ու հեռացել: Իսկ դասապրոցեսը տեղի է ունենում գյուղապետարանում՝ քիչումիչ հարմարեցված պայմաններում:

Երկու գյուղում էլ անհանգիստ են, զարմացած են, հիասթափված են՝ ո՞ւմ դիմել:

Մարզպետարան, բնականաբար, որևէ լուրջ մարդ որևէ լուրջ խնդրով դիմելու մտադրություն չունի: Կրթության շալակը ելած և այնտեղ ծվարած հայտնիները զբաղված են ամեն ինչով, բացի կրթական գործից:

Նախարարի աթոռին բազմած Ժաննային դիմելը նույնպես մեծագույն ամոթ է և անհեթեթություն. մեծ իմաստով ի՞նչ կապ ունի տիկինը կրթական համակարգի հետ: Եթե կապ ունենար, ապա առաջինն ինքը կիմանար Ծավում և Վերին Խոտանանում ստեղծված վիճակի մասին:

Ասում են՝ երկու դպրոցի կառուցումը պետք է իրականացնեին իրանական ինչ-որ շինկազմակերպություններ, բայց սկսել են ու հեռացել...

Թե ինչո՞ւ են հեռացել՝ ոչ ոք չգիտի:

Թե ինչո՞ւ նոր մրցույթ չի կազմակերպվում և նոր շինկազմակերպություններ չեն ընդգրկվում՝ դարձյալ ոչ ոք տեղյակ չէ:

Խաղաղությունը, որի մասին խոսում են բոլորը, Ներքին Հանդում հավատ չի ներշնչում

Մայիսի 12-ին սահմանամերձ Ներքին Հանդում էինք...

Այս տարի այդպես էլ առատ տեղումների և ցուրտ եղանակների պատճառով կարգին գարուն չտեսանք, բայց անձրևների շնորհիվ բնությունն արտակարգ զարթոնք է ապրել: Փթթում է զմրուխտ կանաչը: Դա ավելի է ընդգծվում, երբ մոտենում ենք անտառներով գոտևորված գյուղին և դեպի արևմուտք ծավալվող Մթնաձորին... Առաջինն աչքի են զարնվում կանաչ տանիքներով տները:

Մեր զրուցակիցները՝ Ներքին Հանդի վարչական ղեկավար Խաչատուր Բաղդասարյանը և գյուղի էլեկտրիկ Ռաֆիկ Բաղդասարյանը տեղեկացնում են, որ բացի դպրոցական շենքից և մշակույթի տնից, մյուս շենքերի տանիքները նորոգվել են:

2022-ի աշնանային պատերազմից հետո գյուղի խմելու ջրի ակունքներն անցան հակառակորդի վերահսկողության ներքո: Մեր թերթը, ի դեպ, մի քանի անգամ բարձրաձայնել է, որ Ներքին Հանդ գյուղն անհապաղ պիտի ապահովել խմելու ջրով: Կապանի համայնքապետարանի ֆինանսավորմամբ նախագիծ կազմվեց, կառավարության աջակցությամբ լուծվեց խմելու ջրի խնդիրը. 1.5 կմ հեռավորությունից ջրագիծ անցկացվեց, գործում է նաև օրվա կարգավորման ջրամբարը: «Ինչքան օգտագործում ենք, հինգ անգամ ավելի գետն է թափվում», - այդպես է ներկայացնում ջրի առատությունը գյուղի վարչական ղեկավարը:

Գյուղը երեք կողմից շրջապատված է ադրբեջանական մարտական դիրքերով, ասես աքցանի մեջ առնված լինի: Փաստորեն միայն բնակելի հատվածն է մերը: 2022 թվականի պատերազմից հետո հակառակորդի վերահսկողության ներքո անցան նաև գյուղի գերեզմանատունը, գյուղի Սուրբ Գևորգ եկեղեցին:

Ներքին հանդեցիները նույնիսկ զրկված են հարազատ-մտերիմների շիրիմներին այցելելուց: Եվ հիմա, երբ մարդ է մահանում, Կապանում են հուղարկավորում:

Ըստ մեր ունեցած տեղեկությունների՝ քանիցս խնդրանք–առաջարկ է ներկայացվել ադրբեջանական կողմին՝ գերեզման տանող ճանապարհը և գերեզմանի տարածքը մեզ վերադարձնելու համար, բայց՝ ապարդյուն...

Եվ մարդիկ չեն թաքցնում իրենց մտահոգությունը. **«Չգիտենք՝ ինչ է լինելու գյուղի ճակատագիրը: Ճիշտ է, մեր ուղղությամբ վերջերս կրակոցներ չեն եղել, բայց, պատահել է, կովը պայթել է ականի վրա»:**

Եվս մի տարօրինակ փաստ հաղորդեցին մեր զրուցակիցները: Ծավի խաչմերուկից մինչև հակառակորդի հետ շփման գիծ՝ ճանապարհը պիտի ասֆալտապատվի, որն անմիջապես գյուղի վերին հատվածով է անցնում: Ասել է թե՝ գյուղամիջյան ճանապարհի հիմանորոգումը դուրս է մնացել նախագծից, ուրեմն և շարունակվելու է մնալ անբարեկարգ ու ասֆալտից զուրկ: Ինչպե՞ս հասկանալ, ինչո՞ւ չպետք է ասֆալտապատվի նաև գյուղամեջ մտնող ճանապարհը:

Շատ թե քիչ ուրախացնող հանգամանք կարելի է համարել այն, որ Ներքին Հանդի դպրոցն այժմ գործում է, թեպետ երեք աշակերտ է սովորում այդտեղ, թեև գալիք սեպտեմբերից՝ մարզի 48 դպրոցների թվում այն նույնպես հուշ է դառնալու:

Եվ վերջին ժամանակներս մի երեխայի ծնունդ է գրանցվել գյուղում:

Վերջին հարյուր տարում երկու անգամ սահմանազատում է տեղի ունեցել Ներքին Հանդի ուղղությամբ՝ մեկը 1920-ական թվականներին, մյուսը՝ 1980-ականներին՝ պատվական մի հայ մարդու՝ Վլադիմիր Մովսիսյանի գլխավորությամբ: Վերջինիս օրոք տեղադրված՝ սահմանը տեղորոշող ցցափայտերը դեռ մնում են: Ցավոք, այդ ամենին ականատես մարդիկ այլևս հանգուցյալ են, թե չէ՝ արժեքավոր տեղեկություններ կստանայինք տասնամյակներ առաջ տեղի ունեցած սահմանազատման մասին...

– Խաղաղության այս ձևը որքանո՞վ է հաճելի Ձեզ,– հարցնում ենք:

— Եթե սահմանները ճշտվեին ու մեզանից բռնազավթած տարածքները վերադարձվեին, միգուցե լավ լիներ, – պատասխանում է համայնքի վարչական ղեկավարը:

Ռաֆիկ Բաղդասարյանն էլ հավելում է՝ **«Խաղաղությունը, որի մասին բոլորը խոսում են, ժամանակավոր դադարի տպավորություն է թողնում և հավատ չի ներշնչում, քանի դեռ առկա հարցերը լուծված չեն»:**

Մի հայացք ենք ձգում դեպի մեր բարձունքներից մեկը, որտեղ ծածանվում է հայկական եռագույնը և տեղադրված է քրիստոնեության խորհրդանիշ խաչ, ու մի պահ ցրվում է ճնշող տրամադրությունդ, բայց...

Շարունակությունը՝ էջ 12

Նոր գրոհ Սյունիքի գյուղերի դեմ՝ 48 դպրոցի փակման ուրվականը

Վերստին ուշադրություն ենք հրավիրում ԿԳՄՍ նախարարի պաշտոնը զբաղեցնող կնոջ 2023 թ. սեպտեմբերի 11-ի N 1790–Ա/2 հրամանի վրա, որի համաձայն գալիք ուսումնական տարվանից Սյունիքի գյուղական բնակավայրերում կփակվի 48 դպրոց:

Եթե կյանքի կոչվի հակասյունիքյան այդ նախագիծը՝ մոտ ապագայում կբախվենք մարզի գյուղերի մի մասի վերացմանը: Ստորև՝ գյուղական այն դպրոցների ցանկը, որ Հայաստանի օրվա իշխանությունը փորձում է փակել:

Կապան համայնքում

1. Վարդավանքի միջնակարգ դպրոց
2. Եղեգի միջնակարգ դպրոց
3. Դավիթբեկի միջնակարգ դպրոց
4. Աղվանու հիմնական դպրոց
5. Տանձավերի միջնակարգ դպրոց
6. Վերին Խոտանանի միջնակարգ դպրոց
7. Օխտարի միջնակարգ դպրոց
8. Տավրուսի միջնակարգ դպրոց
9. Ագարակի հիմնական դպրոց
10. Ճակատենի հիմնական դպրոց
11. Ներքին Հանդի հիմնական դպրոց
12. Շիկահողի միջնակարգ դպրոց

Սիսիան համայնքում

1. Ծղուկի միջնակարգ դպրոց
2. Սպանդարյանի միջնակարգ դպրոց
3. Թասիկի հիմնական դպրոց
4. Սալվարդի հիմնական դպրոց
5. Արևիսի հիմնական դպրոց
6. Հացավանի միջնակարգ դպրոց
7. Շենաթաղի հիմնական դպրոց
8. Լորի միջնակարգ դպրոց
9. Որոտանի հիմնական դպրոց
10. Լծենի հիմնական դպրոց
11. Շամբի միջնակարգ դպրոց
12. Մուցքի հիմնական դպրոց
13. Բալաքի տարրական դպրոց
14. Աղիտուի հիմնական դպրոց
15. Բնունիսի հիմնական դպրոց
16. Տոլորսի միջնակարգ դպրոց
17. Սոֆլուի հիմնական դպրոց
18. Տորունիքի հիմնական դպրոց
19. Դաստակերտի միջնակարգ դպրոց

Տաթև համայնքում

1. Սվարանցի միջնակարգ դպրոց
2. Տանձատափի հիմնական դպրոց

Գորիս համայնքում

1. Շուռնուխի միջնակարգ դպրոց
2. Բարձրավանի միջնակարգ դպրոց
3. Ներքին Խնձորեսկի միջնակարգ դպրոց

Տեղ համայնքում

1. Արավուսի տարրական դպրոց
2. Վաղատուրի միջնակարգ դպրոց
3. Խոզնավարի միջնակարգ դպրոց

Քաջարան համայնքում

1. Գեղիի միջնակարգ դպրոց
2. Քաջարանի թիվ 5 միջնակարգ դպրոց
3. Լեռնաձորի հիմնական դպրոց
4. Քաջարանի թիվ 6 հիմնական դպրոց

Մեղրի համայնքում

1. Վարդանիձորի միջնակարգ դպրոց
2. Լիճքի միջնակարգ դպրոց
3. Ալվանքի միջնակարգ դպրոց
4. Նռնաձորի միջնակարգ դպրոց
5. Կարճևանի հիմնական դպրոց

Խաղաղությունը, որի մասին խոսում են բոլորը, Ներքին Հանդում հավատ չի ներշնչում

Սկիզբը՝ էջ 11

Զրուցում ենք, խոսքը խոսք է բերում...

Գյուղի մոտ 6 հազար հեկտար հողատարածքից քանի՞սն է մնացել Հայաստանի ինքնիշխանության ներքո...

Գյուղացիները (չունենալով պաշտոնական տեղեկություններ) տարբեր թվեր են նշում գյուղի բռնազավթված տարածքների մասին՝ 1000 հեկտար, 2000 հեկտար, և մատնացույց են անում գյուղի հարավային բարձունքները՝ Գրիգորի բարձունքը, Վարդանասարը, որոնք 2022-ի աշնանն ադրբեջանցիները զավթեցին և որտեղ իրենց մարտական դիրքերը կառուցեցին, որտեղից, ցավոք, ադրբեջանցիները (անտառամիջով) մի քանի ճանապարհ են բացել դեպի ներքև...

«Էլ ի՞նչ խնդիր ունեք», – հարցին պատասխանում են, – մեզ ամենաշատը, և դա բնական է, մեր անվտանգությունն է անհանգստացնում, մյուս հարցերը ինքներս կլուծենք:

– Գոնե այգիներն ու բանջարանոցները մշակե՞լ եք:

– Ուրիշ բան չունենք անելու, ա՞յդ էլ չանենք,– հետևում է պատասխանը:

Գյուղի ծխամատյանում 56 ծուխ կա, 20-ից ավելի տուն բնակեցված չէ: Հունվարի 1-ին գյուղում վեց–յոթ ընտանիք է եղել: Մտածում ես՝ առավելագույնն քսան տարի հետո (Աստված մի արասցե) գյուղում հնարավոր է մարդ չլինի... Պետական հոգածություն կոչվածն առավել ևս հենց Ներքին Հանդին է անհրաժեշտ:

Հետաքրքրվում ենք, և պարզվում է՝ 2022 թ. աշնանային պատերազմից հետո գյուղում ընտանի կենդանիներ չեն պահում: Գյուղն առանց կովի բառաչի ու ոչխարի մայունի դժվար է պատկերացնել: Երբեմն չես կարող մեղադրել, պատահել է, որ ընտանի կենդանիների անկումներ են եղել ականի վրա պայթելու հետևանքով:

«Սոսու պուրակ» արգելավայր ունեցող գյուղը նաև զբոսաշրջիկների այցելություններից է զրկվել: Համենայն դեպս, նրանց ոտքը 2022 թվականից հետո կտրուկ կտրվել է հեքիաթային այս աշխարհից:

«Մինչև պատերազմը տեղ ու դադար չկար, բայց հիմա շատ քիչ են այցելում», – տեղեկացնում է գյուղի վարչական ղեկավար Խաչատուր Բաղդասարյանը:

***Հ.Գ.** Լրագրողիս պրակտիկայից մի փաստ եմ մտաբերում. հայ մեծ դերասան Սոս Սարգսյանը տնկարան ուներ Ներքին Հանդում: «Կանաչ երկիր» հասարակական կազմակերպության նախագահն էր. Հայաստանում չէին կարողանում սոսու սերմերից տնկիներ ստանալ, ծառի պատվաստման կտրոնների միջոցով էր ստացվում տնկանյութը, ինչի արդյունավետությունը ցածր էր: Տեղեկանալով, որ սոսիների պուրակի տնկարանում սերմերից տնկանյութ են ստանում, որի նախաձեռնողը Կապանում ճանաչված անտառագետ Վլադիկ Մարտիրոսյանն է, Սոս Սարգսյանը դիմեց այն ժամանակվա մարզպետ Էդիկ Բարսեղյանին, վերջինիս հանձնարարությամբ սոսիների պուրակում տարածք հատկացվեց Սոս Սարգսյանի հասարակական կազմակերպությանը, իսկ Վլադիկ Մարտիրոսյանը «Կանաչ երկիր» ՀԿ-ի համար կազմակերպում էր տնկիներ աճեցնելու գործը: Հետաքրքրվում ենք՝ ի՞նչ եղավ, ի՞նչ ճակատագիր ունեցավ այդ տնկարանը: Խաչատուր Բաղդասարյանը մանրամասնում է. «Սոս Սարգսյանը վարձակալության հիմունքներով հողատարածք էր ձեռք բերել, մինչև հիմա պայմանագրի ժամկետը չի լրացել, համագյուղացիներից մեկը նրա հետ համագործակցում էր, այդ անձնավորությունը մինչև հիմա օգտագործում է տարածքը»:*

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Կապանում ԻԻՀ հյուպատոսարանի գեղեցիկ նախաձեռնությունը, որն իրանական ժողովրդի հերոսականության մասին է վկայում

Մայիսի 26-ին Կապանում անցկացվեց Իրանի Իսլամական Հանրապետության գլխավոր հյուպատոսարանի նախաձեռնած «Մեր վրձինների գույներն ընդդեմ պատերազմի» խորագրով նկարչական մրցույթ-ցուցահանդեսը:

Միջոցառմանը մասնակցում էին Կապանի, Քաջարանի, Մեղրիի, Երևանի և Սյունիքի տարբեր դպրոցների ու արվեստի կենտրոնների սաները, որոնց աշխատանքները միավորված էին մեկ գաղափարի շուրջ՝ խաղաղություն: Յուրաքանչյուր նկար իր մեջ կրում էր պատերազմի ցավի ընկալում, խաղաղության սպասում և մանկական անկեղծություն՝ հիշեցնելով, որ նախաձեռնությունը նվիրված է ոչ միայն Իրանի դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում նահատակված իրանցի երեխաների հիշատակին, այլև մարդկային կյանքի արժեքին ու աշխարհի բոլոր երեխաների անվտանգ ապագային: Երեխաները պետք է ապրեն խաղաղ երկնքի տակ, սովորեն, երազեն ու ժպտան, ոչ թե դառնան պատերազմի զոհ:

Միջոցառմանը երաժշտական համարներով հանդես եկան Կապանի թիվ 2 երաժշտական դպրոցի սաները՝ ստեղծելով խաղաղության ու հուզականության մթնոլորտ:

Ավարտին իր խոսքն ասաց Կապանում ԻԻՀ գլխավոր հյուպատոս Մորթեզա Աբեդին Վարամին՝ շեշտելով, որ եթե աշխարհը ղեկավարեին երեխաները, պատերազմներ չէին լինի, քանի որ հենց երեխաներն են բոլորից լավ հասկանում խաղաղության արժեքը:

Նա ցավով ընդգծեց, որ պատմության ընթացքում պատերազմների առաջին զոհերը միշտ երեխաներն են եղել՝ հիշեցնելով Մինաբ քաղաքի դպրոցի ողբերգությունը:

Գլխավոր հյուպատոսը պատմեց, որ երեխաներին օգնության հասած ծնողների և շտապօգնության մեքենաների մոտենալուց հետո դպրոցը կրկին հրթիռակոծվել է:

Իր խոսքի ավարտին նա ներկաներին կոչ արեց միասնական աղոթել, որպեսզի աշխարհում խաղաղություն և հանգստություն հաստատվի:

Միջոցառման ամենահուզիչ հատվածներից էր Մինաբից ժամանած նահատակ աշակերտ Մաբան Նասիրիի ծնողների ներկայությունը: Մաբանի մայրը պատմեց, որ որդին առաջին դասարանի աշակերտ էր ու, թեև այսօր ֆիզիկապես իրենց կողքին չէ, նրա հոգին շարունակում է ապրել: Նա ծանր ցավով նշեց, որ որդուց մնացել է միայն մեկ կոշիկ, սակայն ընդգծեց, որ իրենց որդու անունն այսօր դարձել է խաղաղության ու անմեղության խորհրդանիշ.«Մաբանը կա, կլինի և միշտ կապրի»:

Հոգևոր պատգամով հանդես եկավ Կապանի տարածաշրջանի հոգևոր հովիվ տեր Խաչատուր քահանան՝ ընդգծելով, որ շատ երեխաների նկարներում իշխում է խաղաղության աղավնու կերպարը: Նա նշեց՝ «Երեխաների նկարներում պատերազմ չկա: Այնտեղ կա միայն խաղաղություն, լույս և կյանք»՝ շեշտելով, որ արվեստը հաճախ դառնում է այն լեզուն, որով երեխաներն արտահայտում են խաղաղության իրենց ամենախորը պատկերացումը:

Ելույթներն ընդմիջվում էին 2026 թ. փետրվարի 28-ին Իրանի Մինաբ (Minab) քաղաքի տարրական դպրոցում՝ ԱՄՆ-ի զինված ուժերի ռմբահարությունից տեղի ունեցած աննկարագրելի ողբերգության դրվագներն արտացոլող տեսանյութերով:

Միջոցառման ավարտին մրցույթի հաղթողները պարգևատրվեցին, ինչպես նաև շնորհակալագրեր հանձնվեցին կազմակերպիչներին, մանկավարժներին ու ժյուրիի անդամներին՝ գնահատելով նրանց ներդրումն ու աշխատանքը միջոցառման հաջող իրականացման գործում:

ԻԶԱ ԱՍԾԱՏՐՅԱՆ

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի:

Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ – ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:
® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «ԳԻՆԴ-ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ում: Հասցեն՝ 0074, Երևան, Բագրատունյաց փող., 70ա շենք

Ծավալը՝ 3 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1010, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 17.06.2026թ.: